RiTA
Region in Transition

Association for the Development of Democracy ERWIN

ԳՐԱԻՐ ՄԱԳԱԿԻԱՆ

# Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում

## (դիդակտիկ թրենինգային ուղեցույց)




Օստրովիեց Շվիենտոկժիսկի - Երևան
2023 թ.

„Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում”
ծրագիրը համաֆինանսավորված է լեհ-ամերիկյան Ազատության
Հիմնադրամի կողմից ՌԻՏԱ – Տարածաշրջանում Վերափոխման
ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է Կրթություն
Ժողովրդավարության Համար Հիմնադրամը:

Projekt „Stop mediaterrorowi w Armenii” współfinansowany ze środków Polsko-Amerykańskiej Fundacji Wolności w ramach programu RITA - Przemiany w regionie, realizowanego przez Fundację Edukacja dla Demokracji.

„Stop Mediaterrorowi w Armenii!” jest dostępny na licencji Creative Commons „Uznanie autorstwa - Użycie niekomercyjne 4.0 Międzynarodowe” (CC BY-NC 4.0). Pewne prawa zastrzeżone na rzecz Graira Magakiana oraz Stowarzyszenia na Rzecz Postępu Demokracji ERWIN. Utwór powstał w ramach projektu „Stop Mediaterrorowi w Armenii!”, realizowanego przez Stowarzyszenie na Rzecz Postępu Demokracji ERWIN przy wykorzystaniu środków Polsko-Amerykańskiej Fundacji Wolności. Zezwala się na dowolne wykorzystanie treści – pod warunkiem zachowania niniejszej informacji, w tym informacji o stosowanej licencji, posiadaczach praw oraz o projekcie „Stop Mediaterrorowi w Armenii!”. Treść licencji jest dostępna na stronie https://creativecommons.org/licenses/by-nc/4.0/deed.pl.

«Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում» հասանելի է Creative Commons Attribution – Non-Commercial 4.0 միջազգային լիցենզիայի ներքո (CC BY-NC 4.0): Որոշ իրավունքներ վերապահված են Գրաիր Մագակիանին և Հանուն Ժողովրդավարության Առաջընթացի "ԷՐՎԻՆ" Ընկերությանը: Դիդակտիկ թրեյնինգային ուղեցույցն ստեղծվել է «Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հանուն Ժողովրդավարության Առաջընթացի "ԷՐՎԻՆ" Ընկերությանը կողմից՝ լեհ-ամերիկյան Ազատության Հիմնադրամի միջոցներով: Բովանդակության ցանկացած օգտագործում թույլատրվում է՝ պայմանով, որ այս տեղեկատվությունը պահպանվի, ներառյալ օգտագործված լիցենզիայի, իրավատերերի և «Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում» ծրագրի մասին տեղեկությունները: Լիցենզիայի բովանդակությունը հասանելի է https://creativecommons.org/licenses/by-nc/4.0/deed.pl կայքում:

# Բովանդակություն

| | |
|---|---|
| Առաջաբանի փոխարեն | 5 |
| Անծանոթ մարտադաշտ | 8 |
| Ռազմավարական, թե՞ ռազմական առավելություն | 20 |
| Ճանաչողական սխալներ, թե՞ սխալ ճանաչողություն | 24 |
| Պարզապես անհատականությա՞ն կոտրում | 32 |
| Ճանաչողական կողմնակալությունները | 37 |
| Ռուսական գամբիտի տարբերա՞կ | 51 |
| Իրազեկությունը թ՞ե գործողությունների ճկունությունը | 61 |
| Պատերազմն արդեն ընթանում է | 69 |
| Բացթողման մե՞ղք | 87 |
| Որպես եզրափակում | 98 |
| Թեսթեր | 101 |
| Օգտագործված աղբյուրները | 115 |

# Առաջաբանի փոխարեն

Սույն ժողովածուն կազմվել է միայն ճանաչողաան - տեղեկատվական նպատակով: Այն չունի դասագիրք լինելու նկրտումներ և նպատակ ունի ծառայել որպես ուղեցուց ճանաչողական պատերազմը վերլուծելու փորձի ոլորտում: Ի դեպ՝ այս ուղեցույցում փոխադարձաբար (գործնականում որպես հոմանիշներ) օգտագործվում են թե՛ ճանաչողական, թե՛ կոգնիտիվ տերմինները: Խոսքն, իհարկե, վերաբերում է ճանաչողական պատերազմներին: Հարկ է անմիջապես նշել, որ ճանաչողական պատերազմը տեղեկատվական պատերազմից տարբերվում է նրանով, որ եթե վերջինն ուղղված է տեղեկատվական դաշտում քաոս ստեղծելուն, ապա տեղեկատվություն տարածելուն, հակառակորդի շարքերում խուճապային տրամադրություններ ստեղծելուն, ապա ճանաչողական պատերազմը *«տեխնոլոգիաների օգտագործման միջոցով մարդկային նպատակների ճանաչողությունը փոխելու արվեստ է»*[1]:



[2]

Արդի ժամանակաշրջանում, երբ Հայաստանը ոչ միայն դառնորեն ընկճվեց մարտադաշտում, այլև պարտություն է կրում տեղեկատվական հարթակներում, կոգնիտիվ պատերազմի դերն ու նշանակությունը թերագնահատել պարզապես չի կարելի: Ժամանակն է սթափ ու սառնասիրտ հայացք գցել մեր առջև կուտակված բազմաշերտ խնդիրների վրա ու ամեն ջանք ներդնել անցյալի սխալներն ուղղելու համար:

[1] Ն. Ներսիսյան, *Պատերազմ «Իմաստի» դեմ. առանց աշխարհագրական սահմանների*, 26.11.2021, https://infocom.am/hy/Article/66972 (18.02.2023)
[2] <a href="https://www.freepik.com/free-photo/lie-fake-cheat-word-concept_16473745.htm#query=fake%20news&from_query=desinformation&position=21&from_view=search&track=sph">Image by rawpixel.com</a> on Freepik

Հենց այդ՝ վերոհիշյալ նպատակով է ***Հանուն Ժողովրդավարության Առաջընթացի «ԷՐՎԻՆ» Ընկերությունը*** **նախաձեռնել է «Վերջ մեդիատեռորին» ծրագիրը, որի դրամական հովանավորն է լեհ-ամերիկյան «Ազատություն» Հիմնադրամի «ՌԻՏԱ» ծրագիրը**:

Պատահական չէ ծրագրի շահառուների ընտրությունը՝ հայ լրագրողներ, որոնք ամեն օր առնչվում են տեղեկատվական փոթորիկին՝ ինտերնետային, հեռագրական գործակալությունների, դեպքերի ու դեմքերի...: Ամեն օր բախվում են մի խրթին խնդրի, թե ո՞ր տեղեկությանը հավատալ կամ ո՞րն աղբաման նետել: Ո՞վ կամ ի՞նչ է հավաստի, թե ո՞վ կամ ի՞նչն է խաբեություն:

Սակայն այսօր նրանց առջև ծառանում է մի կնճռոտ, մութ, արագ աճող ու սպառնացող իրողություն. կոգնիտիվ պատերազմ: Եթե լրագրողը նախկինում մեծ մասամբ իրականության տեղեկատու էր, իրողության հրապարակախոս, այս ու այն փաստի հակառակորդ կամ ջատագով, ապա այսօր դառնում է կոգնիտիվ պատերազմների մարտադաշտի մարտիկ: Ավելին, եթե տեղեկատվություն ստացող ոչ լրագրողը կարող է ընկնել կոգնիտիվ պատերազմի մեր, ավա՜ղ, հմուտ հակառակորդի թակարդները, հուսալքվել ու հանձնվել առանց մարտի, ապա լրագրողը իրավունք չունի այս հարթությունում մնալ «դավին անտեղյակ, ցավին անտարբեր»:

Ուրեմն, փորձենք այս ձեռնարկով (որը սոսկ ուղեցույց է ու ոչ դասագիրք) քիչ ավելի հմուտ «զորավարժություններ» կատարել նոր «մարտադաշտում» առավել արհեստավարժ լինելու համար:

Այս պատերազմը սահմաններ չունի: Այսինքն՝ ունի մի սահման: Դա հակառակորդի նենգության, կրթվածության, ստորության ու խելացիության եզրագիծն է:

„Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում” նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

# Անծանոթ մարտադա՞շտ

*Գլոբալ անկայունության պայմաններում ռազմավարական առճակատումների հիմնական ասպեկտը մարդկային գիտակցության համար պայքարն է և, ընկալման դաշտի վրա ազդելով, աշխարհի ձևավորումը: Դա կինետիկ էֆեկտ չէ, այսինքն՝ թշնամուն զենքով ոչնչացնելը, այլ ճանաչողական էֆեկտ է, այսինքն՝ ազդել թշնամու գիտակցության վրա՝ նվազեցնելով նրա դիմադրելու կամքը: Ճանաչողական էֆեկտը տեղեկատվության մանիպուլյացիա է՝ մտքերն ու վարքը փոխելու համար: Եվ այնուամենայնիվ, մեջբերելով Սուն-Ցզիին՝ «Բարձրագույն արվեստը կայանում է նրանում, որ կոտրես թշնամու դիմադրությունը՝ առանց մարտի դաշտում կռվելու»[3]:*

*Կեղծ տեղեկությունները և ապակողմնորոշիչ պատմությունները եղել են պետությունների հակամարտությունների և պետական քաղաքականության գործիքներ այն պահից, երբ առասպելական Տրոյա քաղաքն ընկավ հին հույների ձեռքը և, հնարավոր է, նույնիսկ ավելի վաղ: Հեռավոր անցյալում կային մոլորեցնող փայտե ձիեր, կեղծ վկաներ և կեղծ ծրագրեր: Այսօր մենք ունենք կեղծ լուրեր, կեղծ սոցիալական մեդիապրոֆիլներ և հորինված պատմություններ, որոնք ստեղծվել են մոլորեցնելու համար, երբեմն որպես համակարգված ճանաչողական պատերազմի արշավների մաս*[4]:

Լեհական հակահետախուզության պահեստազորի գնդապետ, ԵՎՐՈՊՈԼ-ի Ռուսաստանի հարցերով նախկին փորձագետ Ադամ Յավորը նշում է, որ ՆԱՏՕ-ն մինչ այժմ ճանաչել է պատերազմի հինգ ոլորտ՝

[3] A. Jawor, *Umysł polem bitwy. Zrozumieć wroga i wygrać bez broni*, INFOSECURITY24,09.08.2022, https://infosecurity24.pl/bezpieczenstwo-wewnetrzne/umysl-polem-bitwy-zrozumiec-wroga-i-wygrac-bez-broni (16.02.2023); հմմտ. A. Pastor, *Cognitive warfare*, 06.02.2023, https://webcache.googleusercontent.com/search?q=cache:HHH5Ajyz9PgJ:https://osf.io/ynfzr/download/%3Fformat%3Dpdf&cd=13&hl=pl&ct=clnk&gl=pl (17.02.2023)

[4] D. Calvo, R. Cheng, M. Helou, N. Kratz, C. Liddy, J. McDonnell, T. Shin, J. Taak, J. Crawford, M. Furbish, M. A. Haj, N. Luzum, O. Webb, *Przeciwdziałanie dezinformacji - wzmocnienie cyfrowej odporności Sojuszu*, „NATO Review", 12.08.2021, https://www.nato.int/docu/review/pl/articles/2021/08/12/przeciwdzialanie-dezinformacji-wzmocnienie-cyfrowej-odpornosci-sojuszu/index.html (16.02.2023); հմմտ. A. Pastor, *Cognitive warfare* …

**„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:**

1. ցամաքային,
2. ծովային,
3. օդային,
4. տիեզերական,
5. կիբերտարածություն:


[5]

Փորձագետն ընդգծում է, որ վերջին տարիներին ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Չինաստանը, Ռուսաստանը, Թայվանը և Կանադան իրենց ռազմական մտածողության մեջ նոր մարտադաշտ են ավելացրել՝ մարդկային միտքը: Ճանաչողական (կոգնիտիվ) պատերազմի հայեցակարգը մտցվեց հանրային դիսկուրսի մեջ որպես **տեղեկատվական պատերազմի, հակահետախուզության, հսկողության և հետախուզության, էլեկտրոնային պատերազմի, հոգեբանական գործողությունների, կիբեռնետիկ գործողությունների** սերտաճում՝ օգտագործելով

[5] <a href="https://www.freepik.com/free-photo/global-business_11306655.htm#query=fake%20news&from_query=desinformation&position=20&from_view=search&track=sph">Image by rawpixel.com</a> on Freepik

թվային և ցանցային ենթակառուցվածքները: Սա ներկայումս ՆԱՏՕ-ում ամենահաճախ քննարկվող թեմաներից մեկն է[6]:

Մի շարք գիտական աղբյուրներ[7] նշում են, որ ճանաչողական պատերազմը միավորում է տեղեկատվական, կիբերնետիկ և հոգեբանական ոլորտներում առկա բոլոր տարրերը և դրանք տեղափոխում նոր մակարդակ՝ ոչ միայն թիրախային բնակչության ընկալումը մանիպուլյացիայի ենթարկելու, այլ նաև՝ ցանկալի պատասխանին հասնելը ապահովելու նպատակով:

Այն դիրքավորում է միտքը որպես մարտադաշտ և վիճելի տարածք, որի գլխավոր նպատակներն են.

- ստեղծել դիսոնանս,

- հորինել / ստեղծել հակասական պատմություններ /,

- բևեռացնել կարծիքներ,

- արմատականացնել թիրախային / առճակատման / ռադիկալ խմբերը:

Խոսքը վերբարում է տեղեկատվական պատերազմի գործիքին, որն ուղղված է մարդկային գիտակցությունը փոխելուն և ճանաչողության ու վերլուծության գործընթացները խաթարելուն: Դա պատերազմի ոչ ավանդական ձև է, որն օգտագործում է կիբեր գործիքներ՝ հակառակորդի ճանաչողական գործընթացները փոխելու, մտավոր կողմնակալությունը կամ ռեֆլեկտիվ մտածողությունը[8]

[6] A. Jawor, *Umysł polem …* հմմտ. A. Pastor, *Cognitive warfare …*

[7] A. Jawor, *Umysł polem …*; հմմտ. R. Waltzman, *The Role of Today's VRE and Considerations for Cognitive Warfare*, 18.11.2022, https://www.act.nato.int/articles/cognitive-warfare-considerations (16.02.2023); K. Cao, S. Glaister, A. Pena, D. Rhee, W. Rong, A. Rovalino, S. Bishop, R. Khanna, J. Singh Saini, *Countering cognitive warfare: awareness and resilience*, „NATO Review", 20.05.2021, https://www.nato.int/docu/review/articles/2021/05/20/countering-cognitive-warfare-awareness-and-resilience/index.html (16.02.2023); T.-Ch. Hung, T.-W. Hung, *How China's Cognitive Warfare Works: A Frontline Perspective of Taiwan's Anti-Disinformation Wars*, "Journal of Global Security Studies" , 7(4), 2020, p. 1–18; K. Takagi, *The Future of China's Cognitive Warfare: lessons from the war in Ukraine, War on the Rocks, National security. For insiders. By insiders*, 22.07.2022, https://warontherocks.com/2022/07/the-future-of-chinas-cognitive-warfare-lessons-from-the-war-in-ukraine (16.02.2023); R. Reczkowski, A. Lis, *Cognitive Warfare: what is our actual knowledge and how to build state resilience?*, „Bezpieczeństwo: teoria i praktyka", 3/2022, p. 51-61.

[8] „Ռեֆլեկտիվ մտածել նշանակում է մի շարք վերլուծություններ կատարել մեր իրադարձությունների կասկադային հետևանքների վրա `մեր ապագան ճիշտ պլանավորելու համար: Մտածողության այս տեսակը թույլ է տալիս մեզ գտնել մեր նպատակներին հասնելու լավագույն միջոցները:" (Է. Մուր, *Մտածողության 24*

շահագործելու, մտքերի խեղաթյուրումներ հրահրելու, որոշումների կայացման վրա ազդելու և գործողություններին խոչընդոտելու համար՝ բացասական ազդեցություն ունենալով ինչպես անհատական, այնպես էլ հավաքական մակարդակներում: Դա պայքար է հասկանալու, թե ինչպես է թշնամին մտածում, ինչպես է աշխատում նրա միտքը (մտածողությունը), ինչպես է նա տեսնում աշխարհը և զարգացնում իր հայեցակարգային մտածողությունը:

Ըստ փորձագետների[9], կոգնիտիվ պատերազմների գլխավոր խնդիրն է հասկանալ թշնամուն**,** որովհետև այդ պատեր-ազմում ներգրավված են ոչ միայն պետությունները՝ իրենց գաղտնի ծառայություն-ներով, այլ նաև անդրազգա-


[10]

յին կորպորացիաներն ու ահաբեկչական կազմակերպությունները: Ժամանակակից զինված հակամարտություններում ռազմավարական առավելությունը նրանց կողմն է, ովքեր կարող են մարդկանց հետ շփման ուղիներ ստեղծել, հասկանալ նրանց գործողությունների դրդապատճառները և մոտիվացնել՝ իրենց համար ցանկալի ուղղությամբ: Ըստ Ա. Յավորի, հատկապես կարևոր է մուտք ունենալ քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական ցանցեր՝ ինչպես մեր սեփական, այնպես էլ մեր հակառակորդի, որպեսզի հասնենք հարաբերական առավելության, որը

---

*տեսակներ (և դրանց բնութագրերը)*, 09.02.2023, https://hy.warbletoncouncil.org/tipos-pensamiento-216#menu-4 (10.02.2023))

[9] Հմմտ. A. Jawor, *Umysł polem* …; R. Waltzman, *The Role of* …; K. Cao et al, *Countering cognitive warfare* …; T.-C. Hung, T.-W. Hung, *How China's Cognitive* …; K. Takagi, *The Future of China's* …; R. Reczkowski, A. Lis, *Cognitive Warfare* …; A. Pastor, *Cognitive warfare*… և այլք:

[10] <a href="https://www.freepik.com/free-photo/disappointed-displeased-young-man-grabs-head-feels-nervous-feels-nervous-feels-unhappy-holds-mobile-phone-dressed-formally-reacts-received-unexpected-message-isolated-yellow-background_23766740.htm#page=3&query=nerwouse%20craying%20fake%20news&position=14&from_view=search&track=ais">Image by wayhomestudio</a> on Freepik

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է Լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

կլրացնի մեր ռազմական հզորությունը: Ներկայումս հակամարտությունը չի հաղթում զուտ տարածքների գրավմամբ կամ քարտեզի վրա սահմանների ճշգրտմամբ, քանի որ, ինչպես ասում է ՆԱՏՕ-ի ինովացիոն կենտրոնի վերոնշյալ թեմայի փորձագետ, գնդապետ Դյու Կլուզելը, պատերազմի փորձը մեզ սովորեցնում է, որ թեև պատերազմում հակառակորդի բանակը կարող է թուլացնել ֆիզիկական ոլորտը, այնուամենայնիվ այն չի իրագործում բոլոր նպատակները: Ըստ նրա, ճանաչողական պատերազմի դեպքում վերջնական նպատակը փոխվում է, ի վերջո այն հանգում է կոնկրետ այնպիսի խմբերի միջև բախման, որոնք ցանկանում են հասնել իրարից տարբեր արդյունքների: Եվ այդպիսով' հաղթանակ տանել, նշանակում է կարողանալ ցանկալի վարքագիծ պարտադրել մյուս կողմին: Հետևաբար, դա թիրախային բնակչության մեջ գաղափարական դարձ է: «Ճանաչողական պատերազմի նպատակն է ոչնչացնել ոչ միայն հակառակորդի զինված ուժերը, այլև ողջ հասարակությանը: ... Այն պոտենցիալ անսահման է, քանի որ այս տեսակի հակամարտությունների դեպքում խաղաղության պայմանագիր կամ հանձնում չի կարող ստորագրվել»,- բացատրում է նա: Իսկ եթե նույնիսկ ինչ-որ փաստաթուղթ է ստորագրվում, ապա այն ունի պարզապես ձևական բնույթ: Կոգնիտիվ պատերազմը խեղաթյուրում է իրադարձությունների ըմբռնումն ու արձագանքները աստիճանաբար և նուրբ ձևով, բայց ժամանակի ընթացքում շատ ավելի բացասական' կործանարար հետևանքներով: Այն օգտագործում է ապատեղեկատվություն և քարոզչական տեխնիկա` իր լսարանին հոգեբանորեն հյուծելու համար: Տեխնոլոգիաներով հագեցած և տեղեկատվական ինտենսիվ միջավայրում ճանաչողական ունակությունները կառավարելը կարևոր է, հատկապես, երբ խոսքը վերաբերում է հակառակորդի կարողությունները խաթարելուն: Դա պատերազմի ոչ ավանդական ձև է, որն օգտագործում է կիբեր գործիքներ` հակառակորդի ճանաչողական գործընթացները փոխելու, մտավոր

կողմնակալությունը կամ ռեֆլեկտիվ մտածողությունը[11] շահագործելու, մտքերի խեղաթյուրումներ հրահրելու, որոշումների կայացման վրա ազդելու և գործողություններին խոչընդոտելու համար՝ բացասական ազդեցություն ունենալով ինչպես անհատական, այնպես էլ հավաքական մակարդակներում: Դա պատերազմ է, թե ինչպես է թշնամին մտածում, ինչպես է աշխատում նրա միտքը (մտածողությունը), ինչպես է նա տեսնում աշխարհը և զարգացնում իր հայեցակարգային մտածողությունը[12]:

**Ճանաչողական պատերազմի և քարոզչության միջև տարբերությունն այն է, որ ճանաչողական պատերազմում բոլորն են մասնակցում տեղեկատվության և գիտելիքի մշակմանն ու ստեղծմանը, և ամենից հաճախ՝ ակամա:**

Սա նուրբ, բայց էական տարբերություն է: Անհատները, որոնք մինչ այժմ պասիվորեն ենթարկվել են քարոզչության, այժմ ակտիվորեն նպաստում են դրան[13]:

Քարոզչության և ազդեցության գործողությունների կիրառումը տարածված էր պատերազմներում, բայց այժմ այն ստացել է համարյա լիովին ինքնուրույն պատերազմի ձև՝ իր ռազմավարական կիրառմամբ (աննախադեպ մասշտաբով ու ծավալով): Սոցիալական, թվային և այլ հաղորդակցման միջոցների շարունակ զարգացող և լավ ծրագրված օգտագործումը հնարավորություն է տվել ակնթարթորեն ավելի շատ լսարանների հասնել, այն էլ՝ համապատասխանորեն

[11] „Ռեֆլեկտիվ մտածել նշանակում է մի շարք վերլուծություններ կատարել մեր իրադարձությունների կասկադային հետևանքների վրա `մեր ապագան ճիշտ պլանավորելու համար: Մտածողության այս տեսակը թույլ է տալիս մեզ գտնել մեր նպատակներին հասնելու լավագույն միջոցները:” (Է. Մուր, *Մտածողության 24 տեսակներ (և դրանց բնութագրերը)*, 09.02.2023, https://hy.warbletoncouncil.org/tipos-pensamiento-216#menu-4 (10.02.2023))

[12] A. Jawor, *Umysł polem* …; հմմտ. R. Waltzman, *The Role of* …; K. Cao et al, *Countering cognitive warfare* …; T.-C. Hung, T.-W. Hung, *How China's Cognitive* …; K. Takagi, *The Future of China's* …; R. Reczkowski, A. Lis, *Cognitive Warfare* …; A. Pastor, *Cognitive warfare*… և այլոք:

[13] A. Jawor, *Umysł polem* …; հմմտ. R. Waltzman, *The Role of* …; K. Cao et al, *Countering cognitive warfare* …; T.-C. Hung, T.-W. Hung, *How China's Cognitive* …; K. Takagi, *The Future of China's* …; R. Reczkowski, A. Lis, *Cognitive Warfare* …; A. Pastor, *Cognitive warfare*… և այլոք:

հարմարեցված և նպատակային բովանդակությամբ: Արդեն 2015 թվականին Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն հայտարարել էր. «Մենք բոլորս պետք է ընդունենք, որ խոսքերը, տեսախցիկները, լուսանկարները, ինտերնետը և ընդհանրապես տեղեկատվությունը դարձել են զինված ուժերի հերթական զենքն ու բաղադրիչը»:

Ներկայիս իրականության մեջ ճանաչողական կարողությունները թուլանում են սոցիալական լրատվամիջոցների և դրանց հետ զուգակցված խելացի սարքերի (smart devices) պատճառով: Դրանց օգտագործումը կարող է հանգեցնել ոչ ճիշտ որոշումներ ընդունելուն:

Ավանդական լրատվամիջոցների նկատմամբ վստահությունը նվազում է: Օրինակ, Եվրոպական Միությունում հարցվածների 49% ն առնվազն ակնկալում է, որ հանրային հեռուստատեսությունը և ռադիոկայաններն իրենց ճշմարտացի լուրեր են հաղորդում: Գրավոր մամուլի հանդեպ վստահություն է հայտնում նրանց 39%ը: Մասնավոր հեռուստատեսային և ռադիոկայանները վստահելի լրատվության աղբյուր է համարում հարցվածների միայն 27%-ը[15]:


[14]

[14] <a href="https://www.freepik.com/free-photo/angry-super-hero-businessman-red-cape-shouting-megaphone-with-aggressive-expression-standing-orange-wall_12430213.htm#page=6&query=nerwouse%20craying%20man%20with%20a%20cape%20fake%20news&position=10&from_view=search&track=ais">Image by stockking</a> on Freepik

[15] *EU citizens trust traditional media most, new Eurobarometer survey finds*, Press Releases, 12.07.2022, https://www.europarl.europa.eu/news/en/press-room/20220704IPR34401/eu-citizens-trust-traditional-media-most-new-eurobarometer-survey-finds (010.02.2023)

Ավելին՝ մինչև 30 տարեկան ԱՄՆ չափահասներն այժմ վստահում են սոցիալական լրատվամիջոցների տեղեկատվությանը գրեթե նույնքան, որքան ազգային լրատվական միջոցներին[16]: APR Group-ի հետազոտողները 2019 թվականին Հայաստանում պարզել են, որ հայաստանցիների 74%-ն օգտվում է համացանցից, իսկ բնակչության մոտ մեկ քառորդը օրական 3 ժամից ավել համացանցում է անցկացնում:[17] Ըստ հետազոտության՝ 2019-ին առավել հաճախ օգտագործվող սոցիալական ցանցերն են YouTube-ը(87%) և Facebook-ը (83%), որոնց հաջորդում են Instagram-ը (32%) և Odnoklassniki-ը (28%):[18] Սակայն դեռ 2015-2019 թվականներին, ըստ Reuters Institute Digital News Report-ի, բրիտանացիների արդեն միայն 40%-ն էր վստահում ավանդական լրատվամիջոցներին, իսկ երկրի բնակչության 66%-ն այն օգտատերերն էին, ովքեր ամեն օր վերբեռնում էին հարյուր միլիոնավոր լուսանկարներ, տեսանյութեր և աուդիո ֆայլեր սոցիալական ցանցերում:

Մի շարք աղբյուրներ[19] հավաստում են, որ սոցիալական հարթակները ըստ էության սահմանափակվում են տեքստերի կարճ հատվածների փոխանցմամբ, որոնք անտեսում են ենթատեքստն ու բազում նրբությունները: Սա իհարկե դյուրացնում է ինչպես դիտավորյալ, այնպես էլ ոչ միտումնավոր սխալ մեկնաբանված տեղեկատվության կամ կողմնակալ պատմությունների տարածումը: Սոցիալական մեդիայի հրապարակումների հակիրճությունը, ինչպես նաև տպավորիչ տեսողական պատկերները, խանգարում են ստացողին հասկանալ ուրիշների շարժառիթներն ու արժեքները: Ճանաչողական պատերազմում հաջողությունը որոշվում է նրանով, թե

---

[16] J. Liedke, J. Gottfried, *U.S. adults under 30 now trust information from social media almost as much as from national news outlets*, Pew Research Center, 27.10.2022, https://www.pewresearch.org/fact-tank/2022/10/27/u-s-adults-under-30-now-trust-information-from-social-media-almost-as-much-as-from-national-news-outlets (10.02.2023)

[17] *Սոցիալական ցանցերը ծառայեցնել ոչ թե բիզնեսին, այլ սոցիալական պատասխանատվությանը. Հայաստանի օրինակը*, Առավոտ, 25.12.2020, https://www.aravot.am/2020/12/25/1161590 (10.02.2023)

[18] *Որո՞նք են ամենահաճախ օգտագործվող սոցիալական ցանցերը*, 22.10.2019, https://a1plus.am/hy/article/351487 (10.02.2023)

[19] Հմմտ. C. M. Pulido, L. Ruiz-Eugenio, G. Redondo-Sama, B. Villarejo-Carballido, *A New Application of Social Impact in Social Media for Overcoming Fake News in Health*, „Int. J. Environ. Res. Public Health", 17/2020, 2430, https://www.mdpi.com/1660-4601/17/7/2430 (16.02.2023); A. Jawor, *Umysł polem* …;. R. Waltzman, *The Role of* …; K. Cao et al, *Countering cognitive warfare* …; T.-C. Hung, T.-W. Hung, *How China's Cognitive* …; K. Takagi, *The Future of China's* …; R. Reczkowski, A. Lis, *Cognitive Warfare* … և այլոք:

ով է առաջինն ընտրում հարձակման ժամանակը, վայրը և միջոցը: Սոցիալական մեդիայի բաց լինելը թույլ է տալիս հասարակությանը հաղորդագրությունների, սոցիալական լրատվամիջոցների ազդեցության, իրական կամ կեղծ փաստաթղթերի (իհարկե ընտրովի) փոխանակման թե ցուցադրման, աուդիո-վիդեո փոխանակման միջոցով հեշտությամբ թիրախավորել.

- անհատներին,
- ընտրված խմբերին:

Օգտագործվում է կապի տարբեր միջոցների և առցանց տեղեկատվության զանգվածային անհատականացման փաստը:

Այս միջավայրում գործողություններն իրականացվում են տարբեր տեղեկատվական հարթակների և, մասնավորապես, ինչպես արդեն նշվեց, սոցիալական մեդիայի միջոցով, որտեղ հաղորդագրությունների, համոզմունքների,

[20]

[20] <a href="https://www.freepik.com/free-photo/picture-funny-man-with-fake-muscle-arms_7678743.htm#query=muscle%20growth&position=0&from_view=keyword&track=ais">Image by cookie_studio</a> on Freepik

տեսակետների և պատմությունների վրա կարող են ազդել և որոշակի շահերի համար իմաստափոխել՝ առանց ուղղակի ուժի կամ հարկադրանքի դիմելու: Սոցիալական մեդիա հարթակների մեծ մասը նախագծված է կախվածություն և զգացմունքային կախվածություն առաջացնելու համար: Սոցիալական մեդիայի բովանդակության փոխանցման արագությունը, հուզական դաշտի ինտենսիվությունը և բացառիկ արագ հետադարձ կապի հնարավորությունը ակամա հարկադրում են մարդկանց (ովքեր ենթարկվում են այդ ազդեցություններին) ցուցաբերել բավական ծայրահեղ ռեակցիաներ[21]:



[22]

*Հայերենով ադրբեջանական քարոզչության մի օրինակ*:

Այս լրատվամիջոցները հատկապես հարմար են քաղաքական և սոցիալական բևեռացմանը՝ բացասական հույզերը շատ արագ տարածելու իրենց ներուժի շնորհիվ: Զանգվածային գիտակցության վրա մանիպուլյատիվ ազդեցությունը բազմապատկվում է արհեստական ինտելեկտի մեթոդների կիրառմամբ: Համացանցի ակտիվ օգտատերերը թողնում են իրենց գործունեության այսպես կոչված վիրտուալ հետքերը, որոնց հիման վրա կառուցվում են նրանց մտավոր մոդելները՝ հարմարեցնելով տեղեկատվության հաղորդման տեսակը: Այս ճանապարհով կարելի է «հուշել» այն ստացողին, որ կատարի որոշակի, հաճախ նաև՝ հակառակորդի ուզած ընտրությունները: Այսպիսով՛ օգտատերը կարծում է, թե

[21] Չմմտ. A. Jawor, *Umysł polem* …;. R. Waltzman, *The Role of* …; K. Cao et al, *Countering cognitive warfare* …; T.-C. Hung, T.-W. Hung, *How China's Cognitive* …; K. Takagi, *The Future of China's* …; R. Reczkowski, A. Lis, *Cognitive Warfare* … և այլոք:
[22] *Ամենակարդացվածները*, https://armenia.az (01.04.2023).

ինքն է ընտրություն կատարում, բայց ... իր փոխարեն հակառակորդն է այն արդեն կատարել:

Ճանաչողական պատերազմը փոխել է ««շեմից ցածր»[23] հակամարտություն» հասկացությունը: Վստահությունը պետական կառույցների նկատմամբ, որոնք երկրի ռազմավարական հզորության հենարանն են, կարելի է խափանել փոքր ներուժի օգտագործմամբ՝ հասնելով առավելագույն էֆեկտի: Թվային հաղորդիչների միջոցով ասիմետրիկ մեթոդների և ոչ ավանդական միջոցների շահարկումը քաղաքական պայքարը վեր է ածել ... պատմողական պատերազմի:

[23] Պատերազմ, որի թափն ու մասշտաբը միտումնավոր սահմանափակվում և պահպանվում են ագրեսորի կողմից կանոնավոր, բաց պատերազմի համեմատաբար հստակորեն ճանաչելի շեմից ցածր մակարդակի վրա: Այսպես կոչված ենթագիտակցական ագրեսիայի էությունն է հասնել որդեգրած նպատակներին՝ միաժամանակ անվտանգության միջազգային կազմակերպություններում դժվարություններ առաջացնելով որոշումների կայացման կամ կոնսենսուսի ձեռքբերման հարցում: (St. Koziej, *Agresja poniżej progu wojny – agresja podprogowa*, https://koziej.pl/wp-content/uploads/2015/11/Agresja-podprogowa.pdf, 10.02.2023,)

# Ռազմավարական, թե՞ ռազմական առավելություն

Հաշվի առնելով 20-րդ դարի վերջին երկու տասնամյակների և 21-րդ դարի սկզբի հաջորդ երկու տասնամյակների զինված հակամարտությունների նախկին փորձը՝ ռազմական դոկտրինների որոշակի փոփոխությունները պետք է կարևորվեն: Խոսքը հատկապես վերաբերում է արդեն նշված ճանաչողական բնույթի գործողություններին, այսինքն' ճանաչողական պատերազմին, որը հնարավորություն է տալիս

- կամ կառուցել (երբեմն զրոյից սկսած) պատերազմող կողմերի աշխարհի այն լեզվապատկերը, որն իրենց ձեռնտու է

-կամ հակառակորդին հարկադրել որևէ նպատակային՝ ցանկալի ազդեցություններ կրած, լեզվական աշխարհապատկեր:

Ինչպես նշում է Դեյվիդ Պապալարդոն, *ճանաչողական պատերազմը չի սահմանափակվում միայն տեղեկատվական հսկողությամբ, այն ազդում է նաև մեր ուղեղի գործադիր ֆունկցիայի և որոշումների կայացման վրա: Այս առումով գործողությունների շրջանակը դուրս է գալիս տեղեկատվական պատերազմի միանձնյա դաշտից. տեղեկատվության ուղղորդված ազդեցությունները իրական ազդեցություն են միայն այն դեպքում, երբ սնուցում են ճանաչողությունը: Այստեղ հակառակորդի նպատակն է գործել ՝հիմնվելով մարդկանց մտածելակերպի վրա:*[24] Այլ կերպ ասած, *ճանաչողական պատերազմը հակառակորդի ուղեղ ներթափանցելու գործընթաց է, որպեսզի կոնկրետ գործողություններն ազդեն թիրախային խմբի «ինքնուրույն» որոշումների կայացման վրա, առաջացնեն շփոթություն և, ի վերջո, կաթվածահար անեն հաղթանակի հասնելու նրանց գործողությունները*[25]: Այսպիսով, զարմանալի չէ, որ ինչպես պաշտոնապես ցույց է տալիս, օրինակ, ՆԱՏՕ-ի վերլուծությունը , տեղեկատվական և ճանաչողական ոլորտներում արդյունավետ պայքար մղելու *համար ՆԱՏՕ-ն պետք է ամբողջական-կառավարական մակարդակով*

---

[24] D. Pappalardo, *La guerre-cognitive. agir sur le cerveau de l'adversaire*, 2021-12-09, https://lerubicon.org/publication/la-guerre-cognitive-ից (11.08.2022); հմմտ. A. Pastor, *Cognitive warfare* …

[25] D. Pappalardo, *La guerre-cognitive...*; հմմտ. A. Pastor, *Cognitive warfare* …

*ապագա ռազմական գործողություններում կենտրոնանա նանոտեխնոլոգիաների, բիոտեխնոլոգիաների, տեղեկատվության և ճանաչողական գիտությունների վրա*[26]: Իրերի այս վիճակը կարելի է մեկնաբանել որպես **հակառակորդի իմպլոզիա**: Բացի այդ, գոնե մակերեսորեն, տպավորություն է ստեղծվում, որ այդ պատերազմները կրում են «նուրբ» բնույթ, այսինքն՝ կարող են ընթանալ առանց զոհերի: Ի վերջո, հակառակորդը չի օգտագործում ռումբեր, ականներ և այլն: «Մեղմ պատերազմներ» եզրույթը վերաբերում է զինված հարձակումների ավանդական սահմանմանը չհամապատասխանող հարկադրանքի մարտավարության կիրառմամբ պատերազմներին, որոնք չեն ուղեկցվում ռմբակոծություններով և մահերով: Սա լայն տերմին է, որը ներառում է զինվորականներին անմատչելի բոլոր այսպես կոչված «ոչ կինետիկ» գործողությունները՝ ներառյալ կիբեր զենքերը, տնտեսական պատժամիջոցները, տեղեկատվական պատերազմը, բոյկոտները և օրենսդիր գործառությունները: Այս մարտավարությունները արդյունավետ են և կարող են կործանարար լինել: Հետևաբար, «մեղմ» տերմինը պետք է քննադատաբար օգտագործվի, քանի որ այն կարծես թե նշանակում է բռնության լիովին նոր տեսակ:


[27]

Կոգնիտիվ պատերազմների ջատագովները փորձում են օրինականացնել վերոհիշյալ «ոչ բռնության» լեգիտիմությունը՝ արդարացնելով այս նոր գործիքների օգտագործումը: Ուստի այս ամենն անհրաժեշտ է քննադատական վերլուծության ենթարկել հատկապես իրավա-

[26] *Innovation Hub Warfighting 2040 Project Report.* March 2020, https://www.innovationhub-act.org/sites/default/files/2020-06/WF2040Report.pdf (18.02.2023)
[27] <a href="https://www.freepik.com/free-photo/shocked-middle-aged-blonde-slavic-woman-holding-looking-mobile-phone-touching-head-isolated-crimson-wall-with-copy-

„Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է Լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

կան և էթիկական այն նորմերի տեսանկյունից, որոնք վական և էթիկական այն նորմերի տեսանկյունից, որոնք ավանդաբար կարգավորում են պետությունների կողմից *բռնության կիրառման խնդիրները*[28]: Վերոնշյալ համատեքստում [...] կեղծ տեղեկատվությունը կամ կեղծ լուրերը անհրաժեշտ չեն ճանաչողական պատերազմի նպատակներին հասնելու համար: Քաղաքացիական անկարգություններ հրահրելու համար բավական է, օրինակ, պետական պաշտոնյայի էլեկտրոնային փոստից գողացված ու անանուն սոցիալական ցանցում վերբեռնված կամ սոցկայքում քաղաքական ընդդիմադիր խմբերի հետ կիսված որևէ փաստաթուղթ”[29]:

space_13767286.htm#page=55&query=fake%20news&position=48&from_view=search&track=ais">Image by stockking</a> on Freepik

[28]A. Férey, *Israël/Palestine : les nouvelles armes de la „guerre douce”*, Centre de recherche français à Jerusalem, 14.01.2020, https://crfj.hypotheses.org/629-ից (11.02.2023)

[29] K. Cao et al, *Countering cognitive warfare* ...

# Ճանաչողական սխալներ, թե՞ սխալ ճանաչողություն

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

Կոգնիտիվ պատերազմը կարող է նաև կիրառվել ամենասովորական մարդկային վախը խորացնելու նպատակով՝ կառավարման, ժողովրդավարական գործընթացները խարխլելու, սոցիալական խռովություն բորբոքելու կամ անջատողական շարժումներ հրահրելու համար: Պարզապես ամրապնդվում են ճանաչողական սխալները և, հետևաբար, կրիտիկական պահերին ռացիոնալ որոշումներ կայացնելու անճարակությունը: Ցավոք այսպես կոչված ճանաչողական կողմնակալությունները[30] կարող են հանգեցնել սխալ դատողությունների և մոլորյալ որոշումների, որոնք էլ իրենց հերթին կարող են ակամա սրվել կամ կանխել սպառնալիքի արագ նույնականացումը, որի արդյունքում.

- թիրախային լսարանն ի վիճակի չէ տարբերակել տվյալ տեղեկատվության ճիշտ կամ սխալ լինելը,
- տեղեկատվության գերբեռնվածության դեպքում հաղորդագրության ճշգրտությունը որոշելու համար այդ նույն լսարանը պետք է մանրակրկիտության փոխարեն կարճուղի ընտրի,
- հակառակորդը համոզում է, թե դրանք ճշմարիտ հայտարարություններ, տեղեկություններ կամ հաղորդագրություններ են, որոնք հիշյալ լսարանն արդեն լսել է / տեսել է նույնիսկ/
- ընդունում է փաստարկումները որպես ճշմարիտ, եթե դրանք հիմնված են ինչ-ինչ ապացույցների վրա … անկախ դրանց իսկությունից:

Այսպիսով, ճանաչողական պատերազմը միավորում է տեղեկատվական, կիբերնետիկ և հոգեբանական ոլորտներում առկա բոլոր տարրերը և դրանք տեղափոխում նոր մակարդակ՝ մանիպուլյացիայի ենթարկելով ոչ միայն թիրախային բնակչության ընկալունակությունը, այլ նաև՝ ապահովելով նրա կողմից հակառակորդի համար «կամավոր» ցանկալի պատասխանը: Թեպետ և՛

[30] Ճանաչողական կողմնակալության թեման այնքան ծավալուն է, որ այստեղ այն ընդգրկելու հնարավորություն պարզապես չկա: Այս առումով Ջոն Մանուկյան III'ի բավական մանրակրկիտ գծագրական մշակումը կրելի է տեսնել այստեղ *https://upload.wikimedia.org/wikipedia/commons/6/65/Cognitive_bias_codex_en.svg*

կիբերպատերազմը, և՛ տեղեկատվական պատերազմը, և՛ ճանաչողական պատերազմը, և՛ հիբրիդային պատերազմը պարունակում են հատուկ ազդեցության գործողությունների տարրեր, և կարող են ազդել մարդու ճանաչողական գործողությունների վրա, միայն կոգնիտիվ պատերազմն է, որ առանձնահատուկ կենտրոնացած է մարդկային մտքի ու մտածելակերպի վերահսկմանը՝ ունենալով իր զինանոցում նյարդաբանության բնագավառի հզոր գիտելիքներ:


[31]

Վերոնշյալ փաստերն ու դատողությունները թույլ են տալիս եզրակացնել, որ ագիտացիոն և քարոզչական գործունեությունը, օրինակ՝ սեփական դրական իմիջի ձևավորման նպատակով, ունեն կոգնիտիվ պատերազմի բնույթ: Ռուսական աղբյուրներն օրինակ նշում են, որ հիշյալ մենթալիտետի համար ժամանակակից պատերազմում պայքարն ունի առնվազն հետևյալ գլխավոր նպատակները.

[31] <a href="https://www.freepik.com/free-photo/listen-somebody-caucasian-young-woman-s-portrait-yellow-studio-background-too-much-tasks-how-manage-time-right-concept-working-business-finance-freelance-self-management-planning_14219535.htm#page=2&query=girl%20abacus%20fake%20news&position=6&from_view=search&track=ais">Image by master1305</a> on Freepik

*- բնակչության՝ իր երկրի տեղն ու դերը հասկանալու և նրա ազգային ռազմավարությունը ըմբռնելու ունակության ոչնչացում՝ զարգացնելով այնուհետև կատարյալ անտարբերություն պետության և ժողովրդի ճակատագրի հանդեպ, նախանջելով դեպի սպառողական ապրելակերպ,*

*- ոչնչացնել բնակչության ինքնորոշման ավանդական մեխանիզմները և դրանք փոխարինել նոր՝ փոխնակ ինքնությամբ՝ մարդկանց ներգրավելով սոցիալական ցանցերի և լրատվամիջոցների կողմից ստեղծված տարբեր «մասնակցային և աջակցային խմբերում»,*

*- իջեցնել բնակչության ընդհանուր ինտելեկտուալ մակարդակը մինչև «շաբլոնային / հոլովակային մտածողության» ձևավորում՝ առանց ներկայացված տեղեկատվության հանդեպ քննադատական վերաբերմունքի,*

*- սոցիալական և անձնական վարքագծի արժեքների ու նորմերի նոր, (թշնամու կողմից – Գ.Մ.) հատուկ մշակված մատրիցայի ներմուծում հասարակական գիտակցության մեջ՝ որպես վարքագծի միակ հնարավոր ձև: Սա հանգեցնում է ինչպես նախնիների, այնպես էլ մշակութային և պատմական հիշողության ոչնչացմանը, ինչպես նաև հասարակության հոգեկան անհավասարակշռությանն ու նևրոտիկացմանը. այն էլ իր հերթին ժողովրդին վեր է ածում արտաքին վերահսկողությանը դյուրությամբ ենթարկվող ամբոխի, որն իրականացնում են քաղտեխնոլոգները՝ որոնք թ՛ե «հսկիչներ» են, թ՛ե «վերահսկվող քաոս» ու «գունավոր հեղափոխություններ» ստեղծողներ,*

*- տեղեկատվական տարածությունից ջնջել մարդկային գիտակցության այն հարցերը, որոնք պահանջում են իրադարձությունների մտածված ու անշտապ ըմբռնում, որպեսզի ձևավորեն տևական անձնական գիտելիքներ»:*[32]

[32] М. О. Маричев, И. Г. Лобанов, Е.А. Тарасов, *Борьба за ментальность – тренд современной войны*, в: *Военная Мысль*, № 8 / 2021, с. 51-52; рог.: А. Бартош, *Взаимодействие в гибридной войне*, в: *Военная Мысль*, № 4/2022 с. 6-23

Ցանկացած երևույթի կամ իրադարձության լեզվական պատկերն այնքան կարևոր է հասարակության մտածելակերպում, որ ժամանակակից մուլտիմեդիա տեխնոլոգիաների շնորհիվ ճանաչողական պատերազմը կարող է դառնալ ավելի հզոր զենք, քան զանգվածային ոչնչացման զենքը:

Այս դեպքում արժե հատուկ ուշադրություն դարձնել արտաքին ուժերի նախաձեռնած պառակտումների սարսափելի կործանարար ուժին բառացիորեն յուրաքանչյուր հասարակության մեջ, իսկ ցանկացած հասարակություն միշտ պարունակում է նույնիսկ եղբայրասպան պատերազմի լիցք: Կարելի է հանգիստ ընդհանրացնել Իսրայելի Պաշտպանության բանակի շտաբի նախկին պետ, գեներալ Գադի Էյզենկոտի կարծիքը, որ հասարակության ներքին պառակտումները, իշխանության կառավարական համակարգի փլուզումը կամ պետական ինստիտուտների ու դատարանների հանդեպ հասարակության վստահության անկումը, ինչպես նաև հանցագործությունների աճը դասվում են երկրի ապագայի ամենամեծ սպառնալիքների կարգին. ավելի մեծ (*ներքին - Գ.Մ.*) սպառնալիք, քան արտաքին սպառնալիքներն են[34]:


[33]

---

[33] Image by <a href="https://www.freepik.com/free-photo/hacker-with-laptop_3361144.htm#query=Haker%20Z%20Laptopem%20Przest%C4%99pstwo%20Komputerowe&position=26&from_view=search&track=ais">Freepik</a>

[34] Տես՝ *Les divisions internes constituent une menace plus importante pour Israël que ses ennemis étrangers (ancien responsable militaire),* i24NEWS, 21.01.2022, https://www.i24news.tv/fr/actu/israel/1642723470-les-divisions-

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում” նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

Ռուսական ռազմական միտքը կատարելապես պատրաստ է օգտագործել այս զենքը. «Ինչպես ցանկացած այլ, այնպես էլ կոգնիտիվ իշխանությունից զրկելն ու արտաքին վերահսկողության ենթարկելը: Եթե սրա համար ավելի վաղ՝ դասական պատերազմում, պետք էր ջախջախել թշնամու բանակը և գրավել նրա տարածքը, ապա այժմ դրա կարիքն ամենևին չկա: Հասարակության ինքնագիտակցությունը, աշխարհայացքը, նպատակներն, արժեքներն ու առաջնահերթ խնդիրները փոխելով՝ հնարավոր է կործանել պետությունն ու ամբողջ երկիրը: **Կոգնիտիվ պատերազմի բուն նպատակն անհատի աշխարհայացքը վերափոխելն է**: Ավելին, եթե հնարավոր է վերականգնել բանակն ու երկրի ենթակառուցվածքները, աշխարհայացքի էվոլյուցիան չի կարող հետընթաց ապրել»:[35] Աշխարհայացքը հետշրջելը կամ հեղաշրջելը պահանջում է մի շարք համապարփակ գործողություններ և աշխատանքի ու ֆինանսների իսկայական ներդրումներ:

Եթե թվում է, թե կոգնիտիվ պատերազմի վերոնշյալ խնդիրներն ու հեռանկարներն ինչ-որ առումով կարող են դիտվել որպես ապագայի կանխատեսումներ, ապա պետք է հասկանալ, որ արդեն այս իսկ պահին, օրինակ ռուսական, ռազմագիտական վերլուծաբանները հակառակորդ հասարակությունների մտածելակերպի համար պայքարում առաջադրում են հետևյալ խնդիրները.

- հասարակական կյանքի տարբեր ոլորտներում զանազան իրադրությունների մասին քննադատական տեղեկատվությունները թաքցնել (*բնակչությունից* - *Գ.Մ.*),

- արժեքավոր տեղեկատվությունն ընկղմել «տեղեկատվական աղբի» զանգվածի մեջ՝ «թաքցնել տերևն անտառում» սկզբունքով,

- (*հակառակորդի համար կարևոր - Գ.Մ.*) հասկացությունները փոխարինել այլ ըմբռնումներով կամ առկա իմաստը խեղաթյուրել,

internes-constituent-une-menace-plus-importante-pour-israel-que-ses-ennemis-etrangers-ancien-responsable-militaire (18.02.2023)

[35] А. М. Ильницкий, *Ментальная война России*, „Военная Мысль”, 8/2021, с. 25

- ուշադրությունը կենտրոնացնել ոչ կարևոր իրադարձությունների վրա,

- մեդիատարածքում մշտապես կրկնել այն տերմինների օգտագործումը, որոնց իմաստը որակական փոփոխություններ է կրել,

- տեղեկատվության շահառուներին տրամադրել բացասական տեղեկատվություններ, որն (*ինչպես արդեն ընդգծվեց – Գ.Մ.*) ավելի լավ է ընդունվում՝ համեմատած դրական նորությունների հետ (*ավելին, «բացասական տեղեկատվության ամենօրյա ներհոսքը հիմնականում ունի մեկ շատ կարևոր նպատակ. [...] [անդադար «վատ լուրեր» լսելով՝ մարդիկ սկսում են իրենց զգալ տգեղ, հիվանդ, տխուր, հիասթափված իրենց ճակատագրից և աշխարհից»*[36]՝ դրանից բխող բոլոր, ինչպես մտածական, այնպես էլ հոգեսոմատիկ հետևանքներով – Գ.Մ.),


[37]

- իրական հասարակական արժեք չունեցող իրադարձությունները քննարկել՝ սխալ (*կամ կեղծ - Գ.Մ.*) իրականացված սոցիոլոգիական հետազոտության

[36] Y. Bahriy, *Jak mas media wpływają na nasze ciało i umysł, czyli trochę o higienie napływu informacji*, 20.08.2015, za https://psychologia.studentnews.pl/s/258/7799-Psychologia-newsy/4068938-Jak-mas-media-wplywaja-na-nasze-cialo-i-umysl-czyli-troche-o-higienie-naplywu-informacji.htm ( 21.01.2023].

[37] <a href="https://www.freepik.com/free-photo/shocked-troubled-male-freelancer-programmer-made-huge-mistake-script-looking-worried-laptop-screen_10293627.htm#query=man%20with%20laptop%20fake%20news&position=11&from_view=search&track=ais" >Image by cookie_studio</a> on Freepik

„Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում” նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

արդյունքներն օգտագործելով, որպեսզի ստեղծվի հասարակական իրավիճակի աղավաղված պատկերացում,

- արգելել որոշ տեսակի տեղեկատվական և լրատվական թեմաները՝ թույլ չտալով, որ տեղի ունենան պետական կառույցների համար կարևոր խնդիրների ու հարցերի հանրային լայն քննարկումներ,

- չխուսափել բացահայտ ստից՝ սեփական երկրի բնակչությանը և օտար հանրությանը ապատեղեկացնելու համար»:[38]

[38] М. О. Маричев, И. Г. Лобанов, Е.А. Тарасов, *Борьба за …*

# Պարզապես անհատականությա՞ն կոտրում

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

Այսպիսով, ճանաչողական պատերազմի խնդիրն է «կոտրել անհատականությունը»՝ օգտագործելով «մարդկային ուղեղի թուլությունները»՝ հետագայում կիրառելով «սոցիալական ճարտարագիտություն» անձին վերափոխելու նպատակով: Խոսքը վերաբերում է հատկապես նոր անհատականության ձևավորմանը՝ այլ արժեքների կողմնորոշումներով, բարոյականության և բարու ու չարի այլ ըմբռնումներով:[39]

Կոգնիտիվ պատերազմի և պատերազմի այլ տեսակների միջև կապը կարելի է ամփոփել հետևյալ կերպ.



[40]

Ճշգրտության համար ավելացնենք նաև, որ DDoS՛ը *հաքերային հարձակում է համակարգչային համակարգի վրա այն նպատակով, որ համակարգը բերի խափանման, այսինքն՝ պայմանների ստեղծումն է, որոնց համաձայն համակարգի բարեխիղճ օգտվողները չեն կարողանա ստանալ մուտք դեպի տրամադրված համակարգի ռեսուրսները (սերվերները), կամ կդժվարանան մուտք գործելը : […] Dos և DDoS հարձակումներն ամենատարածվածներից են, քանի որ նրանք կարողանում են*

[39] М. О. Маричев, И. Г. Лобанов, Е.А. Тарасов, *Борьба за …*
[40] T.-Ch. Hung, T.-W. Hung, *How China's Cognitive …*

*խափանել գրեթե ցանկացած համակարգ՝ թողնելով իրավաբանորեն ոչ համապատասխան ապացույցներ*[41]:

Ըստ Հադսոնի ինստիտուտի գնդապետ Կոիչիրո Տակագիի, ճանաչողական պատերազմը պետք է դիտարկվի որպես ռազմավարական առավելություն ստանալու ուղիներից մեկը: Գնդապետը քիչ այլ կերպ է առաջադրում կոգնիտիվ պատերազմի էությունը՝ հիմնվելով այն տեսակետի վրա, որ թշնամուն առանց մարտի հաղթելու հնարավորությունը կարող է թվալ կասկածելի, որովհետև օրինակ Ուկրաինայում այսպես կոչված դասական պատերազմ է ընթանում: Այնուամենայնիվ, շարունակում է փորձագետը, դա չի նշանակում, որ կոգնիտիվ պատերազն անարդյունավետ է: Այն պարզապես գործիքներից միայն մեկն է (բացառիկ կարևոր գործիք) և պետք է ինտեգրված լինի ցամաքային, ծովային, օդային, տիեզերական և կիբեր տարածքներում իրականացվող գործողությունների հետ: Կոգնիտիվ պատերազմի և այլ գործողությունների միջև կոորդինացումը կարևոր է, քանի որ հակառակորդի ընկալումները, ունակությունների վրա ազդելու միջոցները ներառում են ոչ միայն տեղեկատվության փոխանցումն ու բացահայտումը, այլև ահաբեկումն ու զսպումը, որը տեղի է ունենում նաև թվային տեղեկատվության տարածման միջոցով:

Գեորգի Պոչեպսովը՝ Մարիուպոլի համալսարանից, «Պատերազմներ և ճանաչողական գործողություններ» հոդվածում քիչ ավելի է ընդլայնում կոգնիտիվ պատերազմի ազդեցության շրջանակները, ներառելով հետևյալ մակարդակները.

- **ռազմավարական**. խաղաղ ժամանակ ոչ կինետիկ միջոցներով ոչնչացնել և բաժանել թիրախային հասարակությունները,
- **գործառնական**. կիրառել ապատեղեկատվության, քարոզչության և քաղաքականապես զգայուն տեղեկատվության օգտագործման ինչպես կեղծ, այնպես էլ ճշմարիտ միջոցներ,

[41] *DoS*, https://hy.wikipedia.org/wiki/DoS (15.02.2023)

- **մարտավարական.** օգտագործել ավանդական և սոցիալական լրատվամիջոցներով իրականացվող քարոզչական և հարակից դիվերսիոն գործողություններ:[42]

Կոգնիտիվ ագրեսիայի նպատակը, ինչպես ներկայացնում է Հնդկաստանի Անվտանգության, ռազմավարության և տեխնոլոգիաների կենտրոնի Observer Re-


[43]

search Foundation-ի աշխատակից Սամյակ Ռայ Լեխան իր «Մտքերի ճակատամարտի ապագան» տեքստում, հակասություն ստեղծելու միջոցով հակառակորդ երկրի կառավարությանը ապալեգիտիմացնելն է և քաղաքացիների միջև պառակտում

[42] Հմմտ. Г. Почепцов: *Когнитивные войны и операции. Ч 1. Когнитивная война набирается сил*, 13.05.2020, https://yushchuk.livejournal.com/1394915.html (18.02.2023); Г. Почепцов: *Когнитивные ... Ч 2. Когнитивная война раскрывается в примерах*, 13.05.2020, https://yushchuk.livejournal.com/1395446.html (18.02.2023); Г. Почепцов: *Когнитивные ... Ч 3. Когнитивные операции формируют нашу картину мира*, 13.05.2020, https://yushchuk.livejournal.com/1395196.html (18.02.2023)
[43] Image by <a href="https://www.freepik.com/free-photo/people-connected-social-media_20145212.htm#query=girl%20with%20many%20hands%20fake%20news&position=0&from_view=search&track=ais">Freepik</a>

սերմանելը, որպեսզի տվյալ ժողովրդը ստիպված լինի ընդունել իրեն հարկադրված քաղաքական կամքը:

Այլ կերպ ասած՝ *գործընկերոջը կամ հակառակորդին հատուկ պատրաստված տեղեկատվություն տրամադրելով*՝ պետությունները ձգտում են *ստիպել նրան կամովին կայացնել* (*իրենց կողմից – Գ.Մ.*) *կանխորոշված որոշում*՝ դրանով իսկ ենթարկելով նրան ռեֆլեքսիվ հսկողության կամ ինքնահսկողության: Այս գործողության հիմնական նպատակն է, ինչպես արդեն նշվեց, փոխել հակամարտող աշխարհի հիմնական համոզմունքների համակարգը և ըմբռնումները՝ կիրառելով դիտարկել, կողմնորոշվել, որոշել և գործել սկզբունքը[44]:

Հետևաբար դժվար է չհամաձայնել Վրաստանի պաշտպանության նախարար Նինո Ցիխելաշվիլու հետ, որն իր «Ճանաչողական պատերազմի ազդեցությունը ազգային կամքի վրա» հոդվածում նշում է, թե ճանաչողական ոլորտում գործողությունները իրական սպառնալիք են յուրաքանչյուր պետության և պայքարի նրա ազգային կամքի համար: Դա պայմանավորված է.

- մարդու ճանաչողական ոլորտի զգայունությամբ ու բարդությամբ,
- անհատի հոգեկան պատրաստվածությամբ,
- տվյալ ազգի կամ անհատների ազգային արժեքների ընկալումով,
- ժողովրդի հիշյալ արժեքները պաշտպանելու պատրաստակամությամբ:

Սա կարող է բնակչությանը մոտիվացնել թշնամու դեմ կռվելու համար, սակայն հանգեցնել օրինական իշխանությանը դիմագրավելուն, այդպիսով առաջացնելով ապակայունացում: Ենթարկվելով այս գործընթացին՝ ստացողները համոզված են, որ դա ճիշտ է և տեղին[45]:

[44] A. Jawor, *Umysł polem* …
[45] A. Jawor, *Umysł polem* …

# Ճանաչողական կողմնակալությունները

Մեկ անգամ ևս ընդգծենք, որ այս պատերազմի հիմնական գործիքը կոգնիտիվ (ճանաչողական) հարձակումն է: Առավել պարզ ասած՝ դա սոցիալական ինժեներիայի մի յուրահատուկ ձև է, որը նախատեսված է վերափոխելու.

- ինչպես անհատի, այնպես էլ զանգվածների գիտակցության ըմբռնումը,

- իրավիճակի մեկնաբանությունը:

Կոգնիտիվ հարձակման աներկբա առավելությունն այն է, որ ակտիվորեն օգտագործում է կոնկրետ խմբի ճանաչողական կողմնակալությունները որպես զանգվածային գիտակցության ավտոմատ դյուրանցումներ: Խոսքը վերաբերում է իրականությունն ընկալելու իռացիոնալ ձևին[46]:

«Ճանաչողական կողմնակալությունը կարող է սահմանվել որպես շեղում մեր դատողությունից և ճանաչողական գործընթացից, որը մեզ տանում է անտրամաբանական եզրակացությունների, խեղաթյուրումների և մտքի սխալների: Ճանաչողական կողմնակալությունը խեղաթյուրում է իրականության ընկալումը և շատ տարածված է: Ճանաչողական կողմնակալությունները մտավոր դյուրանցումներ են, որոնք օգնում են մեզ արագ որոշումներ կայացնել: Այնուամենայնիվ, երբեմն ճանաչողական կողմնակալությունը կարող է ունենալ բացասական հետևանքներ՝ կտրուկ խեղաթյուրելով իրականությունը: Ճանաչողական կողմնակալությունները ազդում են մեր ամենօրյա սոցիալական հաղորդակցման հմտությունների և փոխազդեցությունների վրա, նույնիսկ մեր գիտական աշխատանքի վրա»:[47] Ճանաչողական կողմնակալության ավելի քան 60 տարատեսակներից առանձնացնենք միայն մի քանիսը:

Մեր թեմայի վերաբերյալ գրականությունը նշում է, որ կան մարդկանց կողմից օգտագործվող բազմաթիվ ճանաչողական կողմնակալություններ: Ներկայացնենք ամենաօգտագործվողների ընտրանին:

[46] Հմմտ. K. Cherry, *What Is Cognitive Bias?*, 07.11.2022, https://www.verywellmind.com/what-is-a-cognitive-bias-2794963 (18.02.2023)

[47] Ա. Գ. Սերդան (թարգ.՝ Ա. Սալազարի), *Ճանաչողական կողմնակալություններ, որոնք բացատրում են, թե ինչու ենք մենք հիմար որոշումներ կայացնում*, https://blog.cognifit.com/hy/cognitive-bias (17.02.2023) (14.02.2023)

**1. Ճանապարհային էֆեկտի ճանաչողական կողմնակալություն:**

Այս կողմնակալությունը կապված է ինչ-որ բանի հավատալու հետ, որի պատճառով դա անում են շատ այլ մարդիկ: Ինչ-որ բանի հավատալու հավանականությունը մեծանում է՝ կախված այն մարդկանց թվից, ովքեր աջակցում են դրան: Որքան շատ մարդիկ հավատան, այնքան ավելի հավանական է, որ մարդը հավատա: Մարդիկ հակված են հետևել ամբոխին՝ չմտածելով, թե իրականում իրենց արածը իմաստ ունի, թե ոչ: Այնուամենայնիվ, բոլորի արածը պարտադիր չէ, որ լավ լինի:



[48]

**Ինչպե՞ս խուսափել այս ճանաչողական կողմնակալությունից:**

Նախքան ինչ-որ բան անելը նախ մտածեք, թե եթե մեզ շրջապատող մարդկանցից շատերն են դա անում, ապա դա իսկապե՞ս ինչ-որ բան է, որ դուք էլ եք ուզում անել, թե՞ պարզապես ուրիշներին հետևելու ցանկություն է

[48] Image by <a href="https://www.freepik.com/free-photo/old-newspaper-strips-assortment_23994242.htm#page=18&query=fake%20news&position=8&from_view=search&track=ais">Freepik</a>

առաջացել: Ներբեռնեք որքան հնարավոր է շատ տեղեկատվություն և ուսումնասիրեք, որպեսզի հասկանաք՝ իմաստ ունի՞ դա անելը, թե՞ ոչ:

**2. Ճանաչողական հաստատման կողմնակալություն:**

Այն մեզ հասած տեղեկատվությունը փնտրելու և մեկնաբանելու միտում է, որը հաստատում է մեր համոզմունքները և դրան զուգահեռ՝ անտեսում կամ ավելի քիչ նշանակություն տալիս դրանց հակասող տեղեկատվությանը: Օրինակ, եթե ես կարծում եմ, որ կաթ խմելը վատ է, ես ավելի մեծ նշանակություն կտամ վեճերին, հետազոտություններին, լուրերին, որոնք ասում են, որ կաթը վնասակար է, և կնվազեցնեմ նշանակությունը այն ինֆորմացիայի, որտեղ ասվում է, որ կաթը օգտակար է: Նույնիսկ եթե ես կաթ  խմեմ, հետո ստամոքսի ցավ կզգամ և դա ավելի շուտ կվերագրեմ կաթին, քան կեսօրին կերած բանջարեղենին:

**Ինչպե՞ս խուսափել այս ճանաչողական կողմնակալությունից**

Միշտ հաշվի առեք կարծիքների ողջ շրջանակը. և՛ նրանց, որոնք ձեր համոզմունքներին կամ կարծիքներին կողմ են, և՛ նրանց, որոնք դեմ են: Այսպիսով, դուք կարող եք ավելի օբյեկտիվ տեսնել իրավիճակը և կարող եք կարծիք կազմել՝ հիմնվելով բոլոր հնարավոր տվյալների վրա, այլ ոչ թե կողմնակալ և մասնակի տեղեկատվության: Փորձեք նաև ինքներդ ձեզ հարցնել, թե ինչպե՞ս կամ ինչու՞ գիտեք ինչ-որ բան, որտեղի՞ց եք ստացել այդ տեղեկատվությունը: Արդյո՞ք դա ճիշտ է:

**3. Վերագրման սխալի ճանաչողական կողմնակալություն**

Վերագրման հիմնական սխալը կայանում է նրանում, որ արտաքին բացատրություններ ենք տալիս մեր սխալներին և ներքին՝ մեր հաջողություններին: Ինչպես նաև ներքին բացատրություններ կտանք մյուսների սխալներին և արտաքին՝ նրանց հաջողություններին: Օրինակ, եթե մեր սիրելի թիմը հաղթի, մենք կմտածենք.

«Մենք ամենաարագն ենք, ունենք լավագույն խաղացողները»: Եթե մեր մրցակից թիմը հաղթի, մենք կմտածենք, որ մրցավարը կողմնակալ է եղել, մյուս թիմը խաբել է:

Երբ մենք սխալվում ենք, մենք հակված ենք արտաքին բացատրություն տալու, օրինակ, եթե ուշ ենք գալիս, կմտածենք, որ երթևեկությունը շատ էր, ինչ-որ մեկն էլ ինձ կանգնեցրեց: Ընդհակառակը, եթե մեր ուղեկիցն է ուշացել, մենք կմտածենք, որ նա միշտ ուշանում է, որովհետև ուշ է արթնանում:

Այս սխալն օգնում է մեզ պաշտպանել մեր ինքնագնահատականը, սակայն դա սխալ պատկերացում է:


[49]

**Ինչպե՞ս խուսափել այս ճանաչողական կողմնակալությունից:** Փորձեք լինել լայնախոհ, երբ ինչ-որ մեկը սխալ է թույլ տալիս, գուցե դա նրա մեղքը չէ: Գովեք մարդկանց իրենց հաջողությունների համար, քանի որ դրանք կարող են լինել ոչ միայն ուրիշների, այլ  հենց իրենց կարողությունների շնորհիվ: Սխալները մի շարք հանգամանքների մի մասն են, որոնք կարող են կապված լինել կարողության կամ իրավիճակի հետ: Ուստի պետք է մանրակրկիտ վերլուծել, որպեսզի իմանանք, թե որ հանգամանքն ունի ավելի շատ ապացույց: Մի՛ շտապեք դատել ուրիշներին կամ ինքներդ ձեզ:

[49] <a href="https://www.freepik.com/free-photo/focused-female-expert-looking-through-latest-financial-news_3079849.htm#page=66&query=fake%20news&position=43&from_view=search&track=ais">Image by katemangostar</a> on Freepik

**4. Հետադարձ հայացք ճանաչողա-կան կողմնակալ-ություն**



[50]

Անշուշտ, ինչ-որ բան պատահելուց հետո դուք մտածել եք. «Ես դա գիտեի»: և իրականում հավատում եք, որ տեսել եք և գիտեք: Սա հետահայաց ճանաչողա-կան կողմնակալությունն է:

**Ինչպե՞ս խուսափել այս ճանաչողական կողմնակալությունից:**

Երբ մտածում եք, որ ինչ-որ բան գուշակել եք, մտածեք իրական հավանականության մասին: Եթե հավանականությունները իսկապես ցածր են եղել, ապա ձեզ համար դժվար էր լինելու իմանալ, որ դա տեղի է ունենալու:

**5. Ճանաչողական կողմնակալության խարսխում:**

Մարդկային հակումն է մեր ստացած առաջին տեղեկատվության վրա կենտրոնանալու կամ «խարսխվելու», այնուհետև դատողություններ կամ որոշումներ կայացնելու միտում ունենալը: Տարբեր խարիսխ կետերը տարբեր արդյունքներ կտան, նույնիսկ եթե այս սկզբնական արժեքները պատահական են: Օրինակ, պատկերացրեք, որ դուք պատրաստվում եք մեքենա գնել, և հենց առաջին փորձի դեպքում ձեզնից պահանջում են 50,000 եվրո: Դուք գիտեք, որ դա շատ բարձր գին է,

[50] <a href="https://www.freepik.com/free-photo/e-mail-global-communications-connection-social-networking-concept_18138116.htm#page=17&query=fake%20news&position=6&from_view=search&track=ais">Image by rawpixel.com</a> on Freepik

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է Լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

բայց դրանից հետո երկրորդ կամ երրորդ դեպքերում, եթե նույնիսկ գնի իջեցում է կատարվում և այդ գինիջեցումը նվազագույն է, համեմատելով այն առաջին առաջարկված գնի հետ, դուք դա ավելի խելամիտ կտեսնեք, նույնիսկ եթե դա դեռևս այդպես չէ:

Եվ դա վերաբերում է ոչ միայն ֆինանսական ոլորտին: Բժիշկը կարող է խարսխվել որոշ հիվանդության ախտորոշման վրա՝ իր տեսած առաջին ախտանիշներով և անտեսել այլ ախտանիշներ կամ տվյալներ:

**Ինչպե՞ս խուսափել այս ճանաչողական կողմնակալությունից:**

Ուշադիր մտածեք, թե արդյոք նրանց կողմից արված առաջարկը իրո՞ք ողջամիտ է, թե՞ մենք այն համեմատում ենք սկզբնական գնի հետ: Մտածեք այն մասին, թե իսկապե՞ս հավատում եք ձեր արածի ճշմարտացիությանը, թե՞ «խարսխում եք» որոշ փաստեր և հրաժարվում այլ տվյալներից:

**6. Ճանաչողական կողմնակալության կույր կետ :**

Դա միտում է հավատալու, որ մենք ավելի քիչ կողմնակալ ենք կամ ավելի քիչ նախապաշարումներ ունենք, քան ուրիշները, որ տեղի ունեցածը մեր հաճախ մտածածն է, որ այն, ինչին հավատում ենք, ճշմարիտ է: Մենք համոզված ենք, որ ճշմարտությունը մեր ձեռքերում է:

**Ինչպե՞ս խուսափել այս ճանաչողական կողմնակալությունից:**

Գիտակցեք, որ մենք բոլորս էլ ունենք նախապաշարումներ, այս կամ այն չափով, ոչ ոք ազատ չէ դրանցից: Մտածեք, թե ինչ եք մտածում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ ապացույց ունեմ, որ դա այդպես է»: Սա կօգնի ձեզ բացահայտել ձեր նախապաշարմունքները և իմանալով դրանց մասին՝ դուք կկարողանաք ազատվել դրանցից:


51

**7. Պատրանքային հարաբերակցության ճանաչողական կողմնակալություն:**

Այն բաղկացած է հավատալուց, որ երկու իրադարձություններ կապված են, մինչդեռ իրականում մենք ապացույց չունենք, որ դա այդպես է: Այս կողմնակալությունը կապված է սնահավատ պահվածքի հետ:

**Ինչպե՞ս խուսափել այս ճանաչողական կողմնակալությունից:**

Այն, որ երկու իրադարձություն տեղի են ունենում իրար մոտ, կամ դուք հաստատել եք, որ դրանք սովորաբար տեղի են ունենում միասին, դա չի նշանակում, որ դրանք կապված են: Օրինակ՝ կինը կարծում է, որ պիտբուլներն իրենց էությամբ վտանգավոր են: Երբ նա լսում է շուն հարձակումը լուրերում, նա ենթադրում է, որ դա հարձակվել է պիտբուլի վրա: Հետևաբար, ավելի լավ է

[51] Image by <a href="https://www.freepik.com/free-photo/people-connected-social-media_20145191.htm#page=14&query=fake%20news&position=49&from_view=search&track=ais">Freepik</a>

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

լինել զգույշ և չենթադրել հարաբերություններ երկու իրադարձությունների կամ իրերի միջև, քանի դեռ ավելի շատ տեղեկատվություն չունեք:


52

**8. Կեղծ կոնսենսուսի էֆեկտ. ճանաչողական կողմնակալություն**

Դա միտում է հավատալու, որ մեր համոզմունքներն ու կարծիքներն ավելի տարածված են, քան իրականում: Դա այն համոզմունքն է, որ մեր վերաբերմունքն ու համոզմունքները ընդհանուր են և տեղին:

**Ինչպե՞ս խուսափել այս ճանաչողական կողմնակալությունից:**

Յուրաքանչյուր ոք աշխարհը տեսնում է իր տեսանկյունից, և երբեմն դժվար է հեռանալ դրանից: Նախքան ենթադրելը, որ բոլորը նույն կերպ են մտածում, հիշեք, որ յուրաքանչյուրն ունի իր միտքը, իր սեփական գաղափարները, համոզմունքներն ու կարծիքները: Մենք կարող ենք կիսվել որոշների մասին, բայց դա կարելի է իմանալ միայն ուրիշների հետ խոսելու կամ ծանոթանալու միջոցով:

**9. Վերահսկողության պատրանք. ճանաչողական կողմնակալություն**

Դա միտում է հավատալու, որ մենք կարող ենք վերահսկել կամ ազդել որոշակի իրավիճակների կամ իրադարձությունների վրա, մինչդեռ իրականում դա այդպես չէ:

[52] <a href="https://www.freepik.com/free-photo/impressed-attractive-redhead-woman-holds-breath-uses-smartphone-reads-shocking-news-browses-internet-social-networks-dressed-warm-knitted-jumper-hat_14265339.htm#page=4&query=fake%20news&position=34&from_view=search&track=ais">Image by wayhomestudio</a> on Freepik

**Ինչպե՞ս խուսափել այս ճանաչողական կողմնակալությունից:**

Պետք իրատես լինել և հասկանալ, թե ինչ կարող ենք կամ չենք կարող վերահսկել: Մենք քննություն կհանձնենք մեր ուսման ու ջանքերի, այլ ոչ թե մեր հմայքի շնորհիվ: Մարդիկ հնարավորություն չունեն կառավարելու ժամանակը, կամ ֆուտբոլային խաղի արդյունքը:



53

## 10. Հասանելիության էվրիստիկ՝ ճանաչողական կողմնակալություն

Մենք գերագնահատում ենք այն տեղեկատվության կարևորությունը, որը մեզ ավելի մատչելի և հասանելի է: Մենք ավելի հաճախակի և հավանական կտեսնենք որևէ փաստ կամ իրավիճակ, որի մասին արդեն իսկ որոշ տեղեկություններ ունենք:

Օրինակ, մենք կարող ենք պնդել, որ ապրելակերպն այնքան էլ կարևոր չէ մեր առողջության համար, քանի որ մենք ճանաչում ենք մեկին, ով ծխում է, խմում, չի մարզվում, անառողջ է սնվում և 90 տարեկան է:

[53] <a href="https://www.freepik.com/free-photo/close-up-young-handsome-man-isolated_13055995.htm#page=4&query=fake%20news&position=35&from_view=search&track=ais">Image by wayhomestudio</a> on Freepik

**Ինչպե՞ս խուսափել այս ճանաչողական կողմնակալությունից:**

Նա կարծում է, որ հաճախակի հանդիպող կամ ներկայացվող տեղեկատվությունը ամենավստահելին չէ: Ինչ-որ բանի հաճախականությունը որոշելիս պետք է հիմնվել փաստի վիճակագրական տվյալների վրա:[54]




[55]

Այսպիսով՝ խոսքը իրականության մասին սովորելու, շրջակա միջավայրից տեղեկատվություն ստանալու, այն մշակելու և սեփական կամ ուրիշի վարքագծի վերաբերյալ գիտելիք ունենալու, ուղղորդելու ունակության մասին է: Հետևանքը հուզական սթրեսն է և թիրախային սուբյեկտի ռացիոնալ մտածողության նվազումը ճանաչողական կողմնակալության տեխնիկայի օգտագործման միջոցով, որոնք ավտոմատ դյուրանցումներ են ապահովում զանգվածային գիտակցության համար, ինչպիսին է ճանաչողական դիսոնանսը: Օգտագործվում է փորձառությունների անհատականացման, օբյեկտների վրա տեղայնացնելու և շարունակական փորձարկումների մեթոդը այնպիսի տեխնոլոգիաներով, ինչպիսիք են վարքագծային վերլուծությունը, արհեստական ինտելեկտը, մեքենայական ուսուցումը և Մեծ

[54] Ա. Գ. Սերդան (թարգ.՝ Ա. Սալազարի), *Ճանաչողական կողմնակալություններ ...*

[55] Image by <a href="https://www.freepik.com/free-photo/arrows-with-fake-news_12810737.htm#page=4&query=fake%20news&position=12&from_view=search&track=ais">Freepik</a>

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում” նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

տվյալները: Այս գործիքները կարող են օգտագործվել, օրինակ, ընտրություններին միջամտելու համար, օրինակ. անհատականացված ձևով ընտրողների պատմությունը ձևավորելը:[56]

Ի դեպ՝ ճանաչողական կողմնակալության հետաքրքիր, բայց բարդ ու համակարգային դիզայն է առաջարկում Ջոն Մանուկյանը: Այն անգլերենով լեզվով կարելի է գտնել այս հասցեով. https://upload.wikimedia.org/wikipedia/commons/6/65/Cognitive_bias_codex_en.svg.

Ճանաչողական կողմնակալության նույնիսկ մակերևույթային վերլուծությունը ցույց է տալիս, որ ճանաչողական հարձակման նպատակը մարդկանց ընկալումների շահարկումն է՝ օգտագործելով նրանց հոգեբանական խոցելիությունը: Այն ուղղված է վարքի փոփոխություններին, որոնք սովորաբար բխում են ապատեղեկատվությունից: Այս «բնագավառում» առկա առավել հաճախ օգտագործվող գործիքն այսպես կոչված **սպառազինված տեղեկատվություն է**: Այսինքն՝ դա ենթադրում է հաղորդագրություն կամ բովանդակություն, որը նպատակաուղղված է ազդելու հակառակորդ օգտատերերի ընկալումների և համոզմունքների վրա այնպես, որ նրանց կոնկրետ վնաս հասցնեն: Օրինակ, համապատասխան պատրաստված կեղծ տեղեկատվությունը կարող է վիրուսային արագությամբ տարածվել ու համարյա բառացի համոզել մեծ թվով մարդկանց, որ դրանք, այսպես կոչված, իրենց ճշմարտություններն են[57]:

Ավելին՝ միտումնավոր մանիպուլյացիայի ենթարկված տեղեկատվությունը ներկայացվում է այնպես, որ այն ստեղծում է թշնամու կողմից կանխորոշված ընկալում: Սրա արդյունքում թիրախ բնակչության շրջանում իրականացվում է կոնկրետ գործողություն՝ հակառակորդի նկատմամբ առավելության հասնելու համար: Օրինակ, փոփոխում են իրավիճակի նկարագրության հայեցակարգը՝ առավելագույնս բացասական պատկերներն ու առասպելները ներկա համատեքստին հարմարեցնելու

[56] Հմմտ. Ա. Գ. Սերդան (թարգ.՝ Ա. Սալազարի), *Ճանաչողական կողմնակալություններ ...*; K. Cherry, *What ...*
[57] Հմմտ. A. Jawor, *Umysł polem ...*

միջոցով: Մարդկամց մոտ ստեղծվում է իրադարձությունների և երևույթների կեղծ պատկերացում:

Համաձայն Գենտի համալսարանի գիտաշխատեղներ Յոնաս Դե Կիրսմաքերի և Արնե Ռոետսի հետազոտությունների՝ կեղծ լուրերը վեց անգամ ավելի արագ են տարածվում և տարածվում են շատ անգամ ավելի հաճախ, քան իրական լուրերը, և կեղծ լուրերով ստեղծված առաջին տպավորությունն արագ չի անհետանում, *նույնիսկ այն դեպքում, երբ մարդը առերեսվում է և պարզում, որ այն իսկապես կեղծ էր*[58]:


[59]

Այնուամենայնիվ՝ կեղծությունն այնքան էլ դյուրին չէ ապակեղծելը, դժվար է այն ճշգրտելը:[60] Քաղաքագետ Բրենդան Նիհանը՝ Նյու Հեմփշիրի Դարթմութ քոլեջից, հավաստում է, թե *մինչ օրս կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ճանաչողության և հիշողության սահմանափակումները, խմբային ինքնությունը կամ գոյություն ունեցող համոզմունքները պաշտպանելուն կամ աջակցելուն ուղղորդված շարժառիթները և այլ մարդկանց ու քաղաքական էլիտաների*

---

[58] J. De Keersmaecker, A. Roets, *„Fake news": Incorrect, but hard to correct. The role of cognitive ability on the impact of false information on social impressions*, „Intelligence", vol. 65, November 2017, p. 107

[59] <a href="https://www.freepik.com/free-photo/scary-crazy-corporate-expression-loud_1089523.htm#page=3&query=fake%20news&position=11&from_view=search&track=ais">Image by kues1</a> on Freepik

[60] J. De Keersmaecker, A. Roets, *„Fake news": Incorrect, but …*; հմմտ. A. Pastor, *Cognitive warfare…*

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է Լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

*հաղորդագրությունները. բոլորն էլ կարևոր դեր են խաղում հենց ապատեղեկատվության տարածման գործում:*[61]

Բրենդան Նայհանը և Ջեյսոն Ռեյֆլերը նկարագրել են նաև սուտը շտկելու այսպես կոչված *հակաարդյունավետությունը*: Ուղղումները ոչ միայն չեն կարողանում ուղղել սխալները և զրպարտության հետևանքները, այլև հակաարդյունավետ են ու ամրապնդում են սխալ դատողությունները՝ հաճախ առաջնորդվելով *միայն մեղավորն է արդարանում* սկզբունքով:[62]

Ընդգծենք մեկ անգամ ևս, որ ճանաչողական հարձակման ուժը ոչ թե ստահակային սուտն է (խաբելը) կամ պարզունակ ապատեղեկատվությունը, այլ կոնկրետ (նաև հորինված) առարկայական փաստերով հաստատված կոնկրետ, (այսինքն՝ նույնպես առարկայական) հնարավորին չափ կայուն հակասություն հրահրելն է: Թաքնված գործողությունները սահմանափակվում են տեղեկատվական շղթայի ստեղծմամբ և գործարկումով: Որքան ավելի հակասական է թեզը կամ տեսակետը, այնքան ավելի դժվար է ցույց տալ, որ հատուկ մշակված ուղերձը հենց հակառակորդն է ներշնչել: Ցանկալի արդյունքի հասնելու համար կեղծ տեղեկատվությունն այլևս անհրաժեշտ չէ. դժգոհություն առաջացնելու համար բավարար է, օրինակ, պետական պաշտոնյայի կոտրված էլփոստից գողացված ինչ-վոր տեղեկություն «տրամադրել» հանրությանը (Facebook, Odnoklassniki և այլն) կամ ընդդիմադիր խմբերին:

[61] B. Nyhan, *Why the backfire effect does not explain the durability of political misperceptions*, 17.09.2019, https://www.pnas.org (18.02.2023)
[62] Հմմտ. A. Jawor, *Umysł polem ...*

# Ռուսական գամբիտի տարբերա՞կ

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում կոգնիտիվ պատերամների ռուսական գիտական ուսումնասիրությունները.

Չմոռանանք, որ *աշխարհի մոդելը (պատկերը) հաճախ ընկալվում է որպես որոշակի ազգային աշխարհայացքի, բնավորության և էթնոհոգեբանության հետ կապված մի բան.*[63]

Հետևաբար, աշխարհի ռուսական լեզվաընկալման պատկերում տեղի ունեցող որոշ երևույթներ կարող ենք սահմանել որպես յուրատեսակ «ռուսականություն»: Առավել ևս, որ առնվազն ռուսականության պարագայում, *աշխարհի լեզվական պատկերը նշանակում է «աշխարհը լեզվի հայելու մեջ», իսկ բուն աշխարհի պատկերը հասկացվում է որպես «մարդկային հոգեկանում շրջապատող օբյեկտիվ իրականության արտացոլում, որը միջինացված է օբյեկտիվ իմաստներով և համապատասխան ճանաչողական սխեմաներով ու ենթակա է գիտակցված արտացոլմանը որպես այն ազգի անցյալի արգասիք, որին մենք ինքներս անդամակցվում ենք*:[64]

Ա. Յավորը համարում է, որ ի տարբերություն արևմտյան մտքի, կոգնիտիվ պատերազմի ռուսական մոտեցումն ավելի ամբողջական է: Համաձայն այդ պատերազմի սահմանման, որը ներկայացրել է պրոֆ. Ստեփան Սուլակշինը՝ Գիտական քաղաքական մտքի և գաղափարախոսության կենտրոնի գլխավոր տնօրենը, *թշնամական երկրի ինտելեկտուալ միջավայրում կեղծ գիտական տեսությունների, պարադիգմների, հասկացությունների, ռազմավարությունների ներդրումն է, որ ազդում են նրա պետական կառավարման վրա՝ ազգային ուժի նշանակալի թուլացման ուղղությամբ: Գործնականում վերընշված կեղծ գիտական տեսությունները, պարադիգմները, հայեցակարգերը և ռազմավարությունները վերածվում են մեծ կործանարար ուժ պարունկաղ զենքերի՝ ազդելով առնվազն ազգային*

---

[63] A. W. Judin, *Rozumienie terminu 'obraz świata' i 'model świata' w semiotyce i lingwistyce rosyjskiej*, „Etnolingwistyka”, t. 16, 2004, s. 318

[64] В. В. Красных, *Основы психолингвистики и теории коммуникации. Лекционный курс*, Гнозис. Кучково поле, Москва 2001, с. 66 (թարգ. Հիմնված. A. W. Judin, *Rozumienie terminu …* s. 320)

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում” նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

*գիտության և կրթության, պետական կառավարման, տնտեսության ու պաշտպանության վրա:*[65] Ռուսական «Ռազմական մտքի» 2021 թվականի ութերորդ համարում «Ճանաչողական պատերազմի միտումները ժամանակակից պատերազմում» հոդվածում ներկայացված են նաև ռուսական կոգնիտիվ պատերազմի հիմնական նպատակները, որոնք մինչ այս նշված արևմտյաններից առավել կուռ ու հստակ են, թեև ունեն նաև շատ ընդհանուր գծեր: Ահա դրանք.


[66]

- երկիրը մղել իր ռազմավարական դիրքն ու դերը հասկանալու կարողության կորստի ուղղությամբ, այնուհետև բնակչությանը պարտադրել երկրի ու ազգի ճակատագրի նկատմամբ անտարբերություն և հակառակորդի նախընտրած ապրելակերպի հաճոյակամ ընտրություն,

[65] Հմմտ. В. Балановский, В. Подъяконов, И. Грекова, *Противоборство в когнитивной войне: борьба за человеческий разум*, „Системы безопасности", 18.10.2022, https://www.secuteck.ru/articles/protivoborstvo-v-kognitivnoj-vojne-borba-za-chelovecheskij-razum (18.02.2023)
[66] <a href="https://www.freepik.com/free-photo/elderly-man-is-using-mobile-phone_2970942.htm#page=2&query=fake%20news&position=48&from_view=search&track=ais">Image by rawpixel.com</a> on Freepik

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

- խաթարելով բնակիչների ինքնորոշման ավանդական մեխանիզմը՝ սոցիալական ցանցերի և լրատվամիջոցների միջոցով մարդկանց բաժանել տարբեր «մասնակցության / աջակցության / խմբերի» և փոխարինել դրանք «կեղծ» նոր ինքնություններով,
- ձևավորել այսպես կոչված անտարբեր մտածողություն, որն այլևս չի քննադատում տրամադրված որևէ տեղեկատվություն,
- հասարակության ընդհանրական գիտակցության մեջ ներդնել սոցիալական և անհատական վարքագծի նոր ու միտումնավոր նախագծված արժեքներ՝ դրանք վարքագծի միակ մոդել դարձնելու նպատակով: Ոչնչացնել հասարակության մշակութային և պատմական հիշողությունը՝ զանգվածային հոգեբանական քաոս ու արդեն հիշյալ «նյարդային խանգարումներ» առաջացնելու նպատակով, որպեսզի հակառակորդը ծայրահեղ խոցելի դառնա ցանկացած արտաքին ազդեցության պարագայում,
- ստեղծել անորոշություն ու մոլորություն տեղեկատվական տարածքում, ինչը հանգեցնում է իրադարձությունները դիտարկելու ունակության և կայուն անձնական ճանաչողական զգացողության կորստի:[67]

Մյուս կողմից, ճանաչողական պատերազմի առանձնահատկությունները, ըստ Ալեքսանդր Բարտոշի (Ռուսաստանի ռազմական գիտությունների ակադեմիայից), բաժանվում են առնվազն հետևյալ կատեգորիաների.

- **հակամարտության բարդություն**, որն իրականացվում է ազդեցության ռազմական և ոչ ռազմական ձևերի կիրառմամբ՝ շեշտը դնելով գաղափարական միջոցների և «վերահսկվող քաոսի» ժամանակակից մոդելների վրա,
- հիմնվելով քայքայիչ ռազմավարության վրա հակամարտությունը երկարաձգել՝ այն դարձնելով պոտենցիալ անվերջ, քանի որ այս տեսակի

[67] Հմմտ. A. Jawor, *Umysł polem bitwy …*

հակամարտությունում չի կարող լինել խաղաղության կամ պարտվելու պայմանագիր,



[68]

- «ագրեսիա» հասկացությունը սահմանող միջազգային իրավունքի նորմերը չեն տարածվում կոգնիտիվ պատերազմի վրա, քանի որ նման պատերազմում չկան «ճակատ» կամ «թիկունք» հասկացությունները և այլն:[69]

Ճանաչողական պատերազմի ռուսական մտապատկերը, որը դիտարկվում է որպես ռազմական փուլի նախադրյալ, մտնում է ռեֆլեքսիվ հսկողության դոկտրինի

[68] Image by <a href="https://www.freepik.com/free-photo/laptop-with-fake-news-webpage-microphone_12225973.htm#page=2&query=fake%20news&position=32&from_view=search&track=ais">Freepik</a>
[69] Հմմտ. А. Бартош, *Война чужими руками. Как противодействовать ставке США и НАТО на прокси-конфликт*, „Независимая газета", 24.03.2022, https://nvo.ng.ru/realty/2022-03-24/8_1182_conflict.html (16.02.2023); А. Бартош, *Стратегия гибридной войны – это не оружие, это влияние*, Научно-исследовательский центр „Национальная безопасность", 30.11.2021, https://nic-pnb.ru/analytics/strategiya-gibridnoj-vojny-eto-ne-oruzhie-eto-vliyanie (16.02.2023); А. Бартош, *Битва умов и битва за умы*, Научно-исследовательский центр „Национальная безопасность", 26.06.2021, https://nic-pnb.ru/analytics/bitva-umov-i-bitva-za-umy (16.02.2023); А. Бартош, *Серая зона – поле битвы XXI века*, „Независимая газета", 27.10.2022, https://nvo.ng.ru/concepts/2022-10-27/1_1212 _web.html (16.02.2023).

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

սահմանման մեջ:[70] Փորձագետների կարծիքով[71] դա ինտեգրված գործողություն է, որը ստիպում է հակառակորդի որոշում կայացնող, օրինակ, անձանց գործել հօգուտ Ռուսաստանի՝ փոխելով նրանց աշխարհընկալումը: Սա դուրս է «պարզ խաբեությունից», քանի որ այն օգտագործում է բազմաթիվ ուղիներ՝ ներառելով ինչպես ճշմարիտ, այնպես էլ կեղծ տեղեկություններ, որոնք, ի վերջո, նպատակ ունեն ստիպել թիրախին զգալ, որ իրենց վարքագիծը փոխելու որոշումը ոչ թե արտաքին հարկադրանք է, այլ հենց իրենց համոզմունքն է: Ռեֆլեկտիվ վերահսկողությունը, ի վերջո, ուղղված է որոշումների կամ դիրքորոշման կայացմանը, հետևաբար փոխանցվող տեղեկատվությունը պետք է հարմարեցվի թիրախի

- տրամաբանությանը,
- մշակույթին,
- հոգեբանությանը,
- հույզերին:

Ճանաչողական զենքի համատարած օգտագործումը նոր իրականություն է ստեղծում, մասնավորապես՝ ազդելով զանգվածային գիտակցության վրա: Դրա օրինակ կարող է լինել Ռուսաստանի միջամտությունը ԱՄՆ նախագահական ընտրություններին, Brexit-ի քվեարկությունը[72] կամ Կատալոնիայի հանրաքվեն[73]: Այս ու համանման գործողությունների նպատակն ընտրողների գիտակցության մեջ քաոս ստեղծելն ու հասարակության բևեռացումը մեծացնելն էր: Չնայած տարածված տեսակետին, որ այդ գործողությունները որոշիչ ազդեցություն չեն ունեցել

---

[70] Հմմտ. A. Jawor, *Umysł polem bitwy …*

[71] Հմմտ. A. Jawor, *Umysł polem …*;. R. Waltzman, *The Role of …*; K. Cao et al, *Countering cognitive warfare …*; T.-C. Hung, T.-W. Hung, *How China's Cognitive …*; K. Takagi, *The Future of China's …*; R. Reczkowski, A. Lis, *Cognitive Warfare …*; А. Бартош, *Война чужими руками…* ; А. Бартош, *Стратегия гибридной …* ; А. Бартош, *Битва умов и …*; А. Бартош, *Серая зона – поле …* և այլոք:

[72] M. Bellon, *Cztery szokujące informacje, które ujawnił sygnalista Christopher Wylie*, PAP, 29.03.2018, „Business Insider", https://businessinsider.com.pl/technologie/nowe-technologie/o-brexicie-i-facebooku-christopher-wylie-przed-parlamentem-gb/vgpkqnm (16.02.2023)

[73] O. Lautman, *Catalonia: Where There's Trouble There's Russia*, 27.09.2021, https://cepa.org/article/catalonia-where-theres-trouble-theres-russia (16.02.2023); *Catalonia referendum: What does Russia want?*, Warsaw Institute, 05.10.2017, https://warsawinstitute.org/catalonia-referendum-russia-want (16.02.2023)

ընտրությունների վերջնական արդյունքի վրա, պետք է նշել, որ տեղեկատվության հասարակական փոխանցման ազդեցությունն ավելի մեծ էր, քան պարզապես հաղորդագրությունների ուղղակի արդյունքը: Ընտրողներին համոզելու ցուցանիշը կազմել է շուրջ 0,39%, իսկ դա իսկապես քիչ է թվում: Սակայն իրականում ԱՄՆ նախագահական ընտրություններում այն ազդեցություն է ունեցել է 282 հազ. լրացուցիչ ձայների վրա (Հ. Քլինթոնը կորցրել է 77000 ձայն): Brexit-ում տարբերությունը արդեն կազմել է մոտ 51,9%[74]: Այս տվյալները ցույց են տալիս, որ համատեքստային նույնիսկ առերես փոքր էֆեկտները վերջնական արդյունքում կարող են հսկայական տարբերություն ստեղծել:

Հարկ է ուշադրություն դարձնել Cambridge Analytica խորհրդատվական ընկերության գործունեությանը և նրա կապերին ռուսական նավթային Lukoil ընկերության ու Սանկտ Պետերբուրգի համալսարանի հետ: Քրիստոֆեր Ուայլին ԱՄՆ



[75]

Կոնգրեսում լսումների ժամանակ բացահայտեց այս կազմակերպության կողմից Facebook-ի օգտատերերի տվյալների ձեռքբերման մասին տեղեկություն, որի հիման վրա անհատական ընտրողներ պրոֆիլավորվեցին՝ նրանց անձնավորված հաղորդագրություն ուղարկելու համար: Նա հայտարարել է, որ Ռուսաստանի

74 A. Jawor, *Umysł polem* ...; M. Bellon, *Cztery szokujące* ...
75 <a href="https://www.freepik.com/free-photo/men-reading-newspaper-isolated-white-background_2826708.htm#query=fake%20news&from_query=desinformation&position=8&from_view=search&track=sph">Image by rawpixel.com</a> on Freepik

Դաշնության Անվտանգության ծառայությանը հասանելի են եղել այդ տվյալները[76]: Միևնույն ժամանակ, «The Guardian»-ը 2021 թվականի հուլիսին հրապարակեց մի տեքստ, որը ցույց է տալիս, որ 2016 թվականի հունվարին Ռուսաստանի Ազգային անվտանգության խորհրդի փակ նիստի ժամանակ Վլադիմիր Պուտինն անձամբ է լիազորել ռուսական ծառայություններին ԱՄՆ նախագահական ընտրություններում աջակցություն ցույց տալ «հոգեպես անկայուն» Դոնալդ Թրամփին: Նա նաև հոգեբանական գնահատական է տվել Թրամփին որպես «իմպուլսիվ, հոգեպես անկայուն և անհավասարակշիռ մարդ, ով տառապում է թերարժեքության բարդույթով»[77]:

Ռուսների կողմից կոգնիտիվ հարձակման կիրառման ևս մեկ օրինակ է COVID-19 համաճարակի օգտագործումը՝ արևմտյան երկրներում հանրային առողջության ճգնաժամ ստեղծելու նպատակով: Պատմությունը վերաբերում էր դավադրության տեսություններին, որոնք վերաբերում էին վիրուսի ծագմանը և հակադիմակների ու հակապատվաստումային շարժումների խթանմանը: Սա հանգեցրեց բռնի սոցիալական բաժանումների որոշ երկրներում և արմատական սոցիալական բողոքների: Ըստ սոցիալական մեդիաներում ապատեղեկատվության, խարդախության, մանիպուլյացիայի դեմ պայքարի կենտրոններից մեկի (Network Contagion Research ինստիտուտ), Twitter-ի այն էջերը, որոնք քարոզում էին հակապատվաստանյութերի տեսությունները, այժմ ավելի ու ավելի հաճախ են տարածում ապատեղեկատվություն ուկրաինական պատերազմի հետ կապված համաշխարհային պարենային ճգնաժամի մասին, որի համար ըստ նրանց պատասխանատու է ՆԱՏՕ-ն: Միևնույն ժամանակ, եթե վերլուծենք սոցիալական ցանցերը և լրատվամիջոցները, որտեղ թերահավատությունը COVID-19 համաճարակի նկատմամբ գերիշխող էր, նրանք ներկայումս կրկնում են այն

[76] M. Bellon, *Cztery szokujące …*
[77] L. Harding, J. Borger, D. Sabbagh, *Kremlin papers appear to show Putin's plot to put Trump in White House*, „The Guardian", 15.07.2021, https://www.theguardian.com/world/2021/jul/15/kremlin-papers-appear-to-show-putins-plot-to-put-trump-in-white-house (16.02.2023)

**„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:**

տեսակետը, որ Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցները հակաարդյունավետ են, ինչը կհանգեցնի էներգետիկ ճգնաժամի, առաջանցիկ արագ գնաճի ու ռեցեսիայի, իսկ ռազմական աջակցությունը Ուկրաինային միայն երկարացնում է զինված հակամարտությունը[78]:


[79]

Լեհաստանի դեպքում ռուսների կողմից ապօրինի միգրացիայի օգտագործումը բելառուսա-լեհական սահմանին ներքին տրամադրությունները բևեռացնելու և ապակայունացնելու համար կարող է դիտվել որպես այդ գործունեության հրաշալի ու անգամ մասամբ արդյունավետ դրսևորում: Կանխատեսող սցենարի շրջանակներում օգտագործվել է «ներքին հինգերորդ շարասյան» բողոքի ներուժը: Արդյունքում սահմանի պաշտպանությանն առնչվող բոլոր գործողությունները ներկայացվեցին որպես ենթադրյալ հումանիտար ճգնաժամի, ռասիզմի և նույնիսկ մարդկության դեմ հանցագործությունների հիմնապատճառ:[80]

---

[78] *Ukraine war: Twitter unveils new policy to combat 'crisis*, „My Europe”, 19.05.2022, https://www.euronews.com/my-europe/2022/05/19/ukraine-war-twitter-unveils-new-policy-to-combat-crisis-misinformation (16.02.2023); *Twitter steps up Ukraine misinformation fight*, 19.052022, https://www.bbc.com/news/business-61512261 (16.02.2023)

[79] <a href="https://www.freepik.com/free-photo/closeup-man-holding-tv_20121357.htm#query=fake%20news&from_query=desinformation&position=5&from_view=search&track=sph">Image by rawpixel.com</a> on Freepik

[80] A. Jawor, *Umysł polem …*; Չմմտ. *Białoruś i Polska: nadużycia i push-backi na granicy*, Human Rights Watch, 14.12.2021, https://www.hrw.org/pl/news/2021/12/14/380474 (18.02.2023); *Kryzys humanitarny na pograniczu polsko-białoruskim*

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում” նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

Ճանաչողական պատերազմն այժմ դառնում է անվտանգության հետազոտության առարկա: Բազմաթիվ երկրներում իրականացվում են հայեցակարգային աշխատանքներ՝ կապված ճանաչողական տիրույթում ագրեսիայի դեմ պաշտպանության նախապատրաստման հետ: Ֆրանսիական պաշտպանական ինովացիոն գործակալությունը մեկնարկել է Myriade և Astrid նախագծերը՝ ճանաչողական պատերազմին առնչվող նոր տեխնոլոգիաների ուսումնասիրման նպատակով: ԱՄՆ-ում ճանաչողական պատերազմի վերաբերյալ հետազոտությունն ու զարգացումն իրականացվում է Defense Advanced Research Projects Agency և Intelligence Advanced Research Projects նախագծերի միջոցով: Դեռ 2021 թ. «ՆԱՏՕ-ի աշնանային նորարարության մարտահրավերի» թեման, որը տեղի ունեցավ Կանադայում, վերնագրված էր «Անտեսանելի սպառնալիքներ. ճանաչողական պատերազմին հակազդելու գործիքներ»:[81]

- *raport Grupy Granica*, 07.12.2021, https://www.iustitia.pl/79-informacje/4334-kryzys-humanitarny-na-pograniczu-polsko-bialoruskim-raport-grupy-granica (18.02.2023); M. Chrzczonowicz, *Kryzys humanitarny na granicy polsko-białoruskiej. Grupa Granica: pomogliśmy 14 tys. osób*, 17.01.2023, https://oko.press/kryzys-humanitarny-na-granicy-polsko-bialoruskiej-grupa-granica-pomoglismy-14-tys-osob (18.02.2023)

[81] Հմմտ. *Fall 2021 NATO Innovation Challenge, The invisible threat: Tools for countering cognitive warfare*, https://www.canada.ca/en/department-national-defence/campaigns/fall-2021-nato-innovation-challenge.html (15.02.2023); A. Jawor, *Umysł polem* …

„Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում” նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

# Իրազեկությունը թ՞ե գործողությունների ճկունությունը

ճանաչողական պատերազմին հակազդելու առաջնահերթ ու ամենագլխավոր խնդիրները կարող են համարվել իրազեկությունը և գործողությունների ճկունությունը:[82]

Արդի պատերազմների հարթություններում այսօր բախվում ենք մի շարք մարտահրավերների՝ հատկապես նոր ի հայտ եկող հակամարտությունների ոլորտներում: Օրինակ, տիեզերական և կիբեր տիրույթները ստեղծվել են հրթիռային, արբանյակային, համակարգչային, հեռահաղորդակցության և ինտերնետ տեխնոլոգիաների զարգացման արդյունքում: Սոցիալական լրատվամիջոցների, սոցիալական ցանցերի և հաղորդագրությունների ու բջջային սարքերի աճող օգտագործումն այժմ ստեղծում է նոր ոլորտ՝ ճանաչողական պատերազմի ոլորտ (պատերազմ մտքի համար)[83]:

Հիմա, երբ արդեն համոզված ենք, որ կոգնիտիվ պատերազմում մարդու միտքը դառնում է մարտի դաշտ, պետք է ընդունենք, որ այդ պատերազմի բուն նպատակն է փոխել ոչ միայն այն, *ինչ մտածում են մարդիկ*, այլ նաև այն, թե *ինչպես են նրանք մտածում* և *ինչպես են գործում*: Արդյունավետորեն վարված կոգնիտիվ պատերազմը ձևավորում և ազդում է անհատական ու խմբային համոզմունքների և վարքագծի վրա՝ նպաստելով ագրեսորի մարտավարական կամ ռազմավարական նպատակներին: Այն իր ծայրահեղ արտահայտված ձևով կարող է հանգեցնել ողջ հասարակության բառացի պառակտմանը և քայքայմանը, որպեսզի այն այլևս չունենա հակառակորդի մտադրություններին հակադրվելու հավաքական կամք: Հակառակորդը կարող է միանգամայն իրատեսորեն իրեն ենթարկել հասարակությանը՝ առանց բացահայտ բռնի ուժի կամ զինված պարտադրանքի դիմելու:[84]

---

[82] K. Cao, et al., *Countering cognitive warfare …*; հմմտ. A. Pastor, *Cognitive warfare…*
[83] Հմմտ. K. Cao, et al., *Countering cognitive warfare …*; D. Calvo, R. Cheng, M. Helou, N. Kratz, C. Liddy, J. McDonnell, T. Shin, J. Taak, J. Crawford, M. Furbish, M. A. Haj, N. Luzum, O. Webb, *Przeciwdziałanie dezinformacji - wzmocnienie …*
[84] Հմմտ. K. Cao, et al., *Countering cognitive warfare …*; D. Calvo, R. Cheng, M. Helou, N. Kratz, C. Liddy, J. McDonnell, T. Shin, J. Taak, J. Crawford, M. Furbish, M. A. Haj, N. Luzum, O. Webb, *Przeciwdziałanie dezinformacji - wzmocnienie …*

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է Լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

Կոգնիտիվ պատերազմի նպատակները կարող են սահմանափակվել կարճ ժամանակային հորիզոնով կամ նույնիսկ կարող են լինել ռազմավարական՝ տասնամյակներ տևող արշավներով: Մեկ արշավը կարող է կենտրոնանալ պլանավորված ռազմական մանևրը կանխելու կամ որոշակի հանրային քաղաքականության մեջ փոփոխություն պարտադրելու սահմանափակ մեկ նպատակի վրա: Մի քանի հաջորդական արշավներ կարող են իրականացվել՝ ունենալով երկարաժամկետ նպատակ՝ խաթարել ամբողջական հասարակությունները կամ դաշինքները՝ կասկածներ սերմանելով իշխանության հանդեպ, խարխլելով ժողովրդավարական գործընթացները, առաջացնելով հասարակական անկարգություններ կամ խթանելով անգամ անջատողական շարժումները[85]:



86

85 K. Cao, et al., *Countering cognitive warfare …*
86 Image by <a href="https://www.freepik.com/free-photo/high-angle-man-reading-digital-magazine_38308668.htm#query=fake%20news&from_query=desinformation&position=40&from_view=search&track=sph">Freepik</a>

Եթե անցյալ դարում շարժական հետևակի, զրահատեխնիկայի և օդադեսանտային ուժերի նորարարական ինտեգրումը հանգեցրեց նոր և ի սկզբանե անդիմադրելի մանևրային պատերազմի, ապա ներկայումս ճանաչողական պատերազմն օգտագործում է կիբեռնետիկ, տեղեկատվական, հոգեբանական և սոցիալական ինժեներական գործիքներ՝ կոնկրետ (քայքայիչ) նպատակներին հասնելու համար: Համացանցը և սոցիալական մեդիաներն օգտագործվում են թիրախավորված հասարակության մեջ ազդեցիկ անհատների, կոնկրետ խմբերի և մեծ թվով քաղաքացիների ընտրողաբար կամ սերիական թիրախավորման համար:

Կարճ ասած՝ այդ պատերազմի նպատակն է.

- սերմանել կասկածներ,

- մտածածին հակասական պատմություններ ներկայացնել, կարծիքների բևեռացում, խմբերի արմատականացում առաջացնել և նրանց դրդել այնպիսի գործողությունների, որոնք կարող են խաթարել կամ քանդել միանգամայն համախմբված հասարակությունը: Սոցիալական մեդիայի և խելացի սարքերի տեխնոլոգիայի լայն կիրառումը Դաշնակից երկրներում կարող է նրանց խոցելի դարձնել հատկապես այս տեսակի հարձակման համար:

Այո, ճանաչողական տիրույթը մրցակցության նոր տարածք է՝ ցամաքային, ծովային, օդային, կիբեր և տիեզերական տիրույթների կողքին ու կեղծ լուրերի կարիք այլևս չկա: Թեև սոցիալական լրատվամիջոցների կեղծ հաշիվները և ավտոմատացված հաղորդագրությունների «բոտերը» կարող են ամրապնդել այս դինամիկան, դրանք անհրաժեշտ չեն: MIT-ի ամենավերջին հետազոտություններից մեկը պարզել է, որ զարմանքի և զզվանքի հույզերը հենց իրենք են հաղորդագրությունները դարձնում վիրուսային, և ոչ թե բոտերը, այլ սովորական օգտատերերը շատ ավելի արագորեն ռեթվիթ են անում դրանք:[87]

[87] D. Calvo, R. Cheng, M. Helou, N. Kratz, C. Liddy, J. McDonnell, T. Shin, J. Taak, J. Crawford, M. Furbish, M. A. Haj, N. Luzum, O. Webb, *Przeciwdziałanie dezinformacji - wzmocnienie …*

Հիշենք, որ Ձեր սիրելի թերթի թղթային օրինակը չգիտի, թե ինչ նորություններ եք սիրում կարդալ, բայց ձեր պլանշետն արդեն շատ լավ գիտի դա: Թերթում տեսածդ գովազդը չգիտի, որ դուք խանութ եք գնացել գովազդում եղածը գնելու. ձեր սմարթֆոնը  այդ մասին արդեն ամեն ինչ գիտի: Ձեր կարդացած հոդվածը չգիտի, որ դուք ոգևորությամբ կիսվել եք այն ձեր ամենամոտ ընկերների հետ: Ձեր սոցիալական ցանցը … գիտի այդ մասին:[88] ՈՒ գիտի նաև, թե ժամը քանիսին եք այն կիսել Ձեր ընկեր – բարկեամների հետ, երբ ու ինչ բովանդակություններ եք գերադասում և այլն: Հիշո՞ւմ եք «Հարսնացուն հյուսիսից» հռչակավոր կատակերգությունը. «Կարող է պատահի՝ մեզ հետեւում են»: … Ոչ, **չի կարող** պատահել: Դա արդեն **փաստ** է: Մեզ հետևում են:


[89]

ՈՒ սրա դեմ միայն զայրույթով պայքարելՆՈՒ սրա դեմ միայն զայրույթով պայքարելն անիմաստ է: Մեր սոցիալական մեդիայի հավելվածները հետևում, թե ինչ ենք մենք

[88] K. Cao, et al., *Countering cognitive warfare …*
[89] <a href="https://www.freepik.com/free-photo/group-happy-young-young-people-sitting-sofa-together-sharing-news-photos-videos-from-smartphones-reading-articles-playing-games-having-fun-social-media-modern-technologies_12264759.htm#query=fake%20news&from_query=desinformation&position=11&from_view=search&track=sph">Image by master1305</a> on Freepik

սիրում և հավանում, մեր սմարթֆոնները հետևում են, թե ուր ենք գնում և ում հետ ենք ժամանակ անցկացնում, մեր սոցիալական ցանցերը հետևում են, թե ում հետ ենք մենք կապի մեջ մտնում և ումից ենք խուսափում: Էլեկտրոնային առևտրի հարթակներն օգտագործվում են մեզ հետևելու համար, մեր նախապատվություններն ու համոզմունքները գործողությունների վերածելու համար՝ առաջարկելով ինչ ու ինչ (գովազդային, մարկետինգային, հետախուզական) խթաններ, որ այս ու այն բանը գնենք ..., որոնք այլ պարագայում չէինք գնի:[90]

Մի խոսքով, մենք ավելի ու ավելի ենք հայտնվում հարմարավետ «պղպջակների» մեջ, որտեղ չսիրելը կամ անհանգստացնող նորությունները, կարծիքները, առաջարկները և մարդիկ արագորեն «ջնջվում են» մեր կյաքից: Ամենավտանգավոր երևույթն այն է, որ ողջ հասարակությունը կարող է պառակտվել բազմաթիվ նման «պղպջակների», որոնցից յուրաքանչյուրն անտեսանելի սահմանով բաժանվում է մյուսներից: Քանի որ այս «պղպջակները» շարունակաբար հեռանում են միմյանցից, ապա շատ հավանական է, որ նրանց իրար մոտենալը կամ միմյանց հետ հաղորդակցվելը պարզապես ցնցող լինի նրանց «բնակիչների» համար:[91]

Մեր թուլացած մտքերը ... Սոցիալական հավելվածներն արագորեն ընդլայնում են օգտատերերի գիտելիքները նոր տեղեկություններով՝ սերմանելով կողմնակալություն, որը ստիպում է մեզ առաջնահերթությունը տալ վերջին իրադարձությունների կարևորությանը՝ անցյալի դեպքերի նկատմամբ: Սոցիալական ցանցերը խթանում են սոցիալական ապացույցների երևույթը, այսինքն՝ ընդօրինակում և հաստատում ենք ուրիշների գործողություններն ու համոզմունքները՝ նրանց սոցիալական խմբերին համապատասխանելու համար: Այս խմբերը դառնում են փակ տարածություն, որտեղ միայն կոնֆորմիզմի ու կոլեկտիվ մտածողության արձագանքներն են լսվում:[92]

---

[90] K. Cao, et al., *Countering cognitive warfare ...*
[91] K. Cao, et al., *Countering cognitive warfare ...*
[92] K. Cao, et al., *Countering cognitive warfare ...*

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է Լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

Հաղորդագրությունների և անգամ տարրողունակ տեղեկատվությունների տարածման արագ տեմպերը և դրանց արագ արձագանքելու անհրաժեշտությունը խրախուսում են «արագ մտածողությունը» (*հենց հիմա և այստեղ*՝ ռեֆլեքսիվ ու զգացմունքային) ի տարբերություն «դանդաղ մտածողության» (ռացիոնալ և վերլուծական): Նույնիսկ կայացած և հեղինակավոր լրատվականներն խելահեղ արագությամբ տպագրում կամ արտատպում են զգացմունքային ու հուզական վերնագրերը՝ հաճախ ակամա խրախուսելով լրատվական հոդվածների «վիրուսային» տարածումը (Հիշու՞մ եք՝ «*Վռազողի կնիկը տղա չի բերում*» 😊 ):


[93]

Մարդիկ պարզապես ավելի քիչ ժամանակ են ծախսում ընթերցանության վրա, թեև ավելի հաճախ են կիսվում իրենց, անգամ կիսատ-պռատ, տեղեկություններով: Սոցիալական հաղորդագրությունների համակարգերը օպտիմիզացված են կարճ

[93] Image by <a href="https://www.freepik.com/free-photo/flat-lay-black-lives-matter-awareness_13378159.htm#query=fake%20news&from_query=desinformation&position=2&from_view=search&track=sph">Freepik</a>

հատվածներ հրապարակելու համար, որոնք հաճախ բաց են թողնում կարևոր ենթատեքստն ու նրբությունները: Սա կարող է նպաստել սխալ մեկնաբանված տեղեկատվության կամ կողմնակալ պատմվածքների կանխամտածված ու նույնիսկ ոչ միտումնավոր տարածմանը: Սոցիալական ցանցերում հրապարակումների հակիրճությունը՝ զուգորդված ապշեցուցիչ տեսողական պատկերներով, կարող է խանգարել ընթերցողներին՝ հասկանալ այլ մարդկանց շարժառիթներն ու արժեքները:

# Պատերազմն արդեն ընթանում է

Կոգնիտիվ պատերազմում պատշաճ պաշտպանությունը պահանջում է առնվազն գիտակցում, որ այդ պատերազմն ընթանում է: Հարկ է դիտարկել և կողմնորոշվել, թե

- որտեղի՞ց է հարվածը գալիս,

- ո՞վ է այն կազմակերպում / ղեկավարում,

- որո՞նք են դրա նպատակները:

Առկա հետազոտությունները ցույց են տալիս, որ կան նման կրկնվող «արշավների» օրինաչափություններ և դրանք կարելի է առնվազն դասակարգել այսպես.

1) տեղեկատվական, հոգեբանական, դիվանագիտական և տնտեսական միջոցների կիրառմամբ հակառակորդին թուլացնելու և միջամտությանը նպաստող բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով ասիմետրիկ գործողություններ իրականացնելը,

2) ապակողմնորոշել երկրի ռազմական հրամանատարությանը և քաղաքական ղեկավարությանը ԶԼՄ-ների, դիվանագիտության և ոչ կառավարական մարմինների միջոցով իրականացվող բացահայտ կամ գաղտնի հատուկ գործողությունների համակցությամբ: Այս գործողությունները հիմնականում բաղկացած են ագրեսիայի օբյեկտ հանդիսացող երկրում հակասությունների կիրառումից և այդ սուբյեկտների տեղեկատվական տարածք կեղծ տեղեկատվության, տվյալների, հրահանգների և հրամանների ներմուծումից,

3) ահաբեկել, խաբել և կաշառել ղեկավար վերնախավի և զինվորականների ներկայացուցիչներին: Այս գործողությունը կոչված է կոտրելու հակառակորդի կամքը՝ անէացնելով նրա դիմադրողական հրամանատարական կառույցները,

4) լայնածավալ օգտագործել քարոզչության տարբեր միջոցները, որոնք բարձրացնում են հասարակության մեջ անորոշության տրամադրությունը և սպառնալիքի զգացումը: Այս ազդեցությունն հատկապես ուժեղանում է տարբեր

զինված խմբավորումների և ռազմականացված կազմակերպությունների կողմից իրականացվող դիվերսիոն գործողությունների միջոցով[94] և այլն:

Այս դասակարգման մեջ՝ որպես պատերազմների աստիճանական էվոլյուցիա, հետաքրքիր, ընթեռնելի և հասկանալի սխեմա է առաջարկվում Վ. Բաղդասարյանը.




[95]

[94] M. Wojnowski, *Koncepcja "wojny nowej generacji" w ujęciu strategów Sztabu Generalnego Sił ZBrojnych Federacji Rosyjskiej*, „Przegląd Bezpieczeństwa Wewnętrznego", 7/13/2015, s. 16-17

[95] В. Багдасарян, *"Когнитивное оружие" как инструмент десуверенизации*, Центр Сулакшина (Центр научной политической мысли и идеологии), 20.11.2018, https://vk.com/@sulakshin_center-kognitivnoe-oruzhie-kak-instrument-desuverenizacii (15.02.2023)

Մինչ օրս պատերազմներն ընթանում էին և ընթանում են չորս հարթություններով, որոնցից ամենաբարդն ու բազմաչափը, ինչպես վերը տեսանք, կոգնիտիվ պատերազմն է: Դժվար է այս պահին գուշակել, թե ինչպիսին կլինի հնարավոր հինգերորդ հարթությունը: Բայց եթե այս պահին մեր մտքի / մտածողության համար պատերազմ է ընթանում զգայական ընկալումների միջոցով, ապա սարսափելի է պատկերացնել, թե ինչ կարող է պատահել մեր մտքի / մտածողության հետ, եթե հանկարծ պարզվի, որ մեր զգայարանները կարող են կրել հեռատեսական ազդեցություն: Հեքիա՞թ է: Ժամանակը ցույց կտա:

21-րդ դարի պատերազմների (բազմատարածք գործողություններ, ահաբեկչական գործողություններ և այլն) ճանաչողական բազմաչափ մարտիկների պատրաստման տեսլականի հիմքը խելամիտ և ստեղծագործաբար գործելու ունակությունն է:

Անվտանգության իրականացման գործում սպանելը, ոչնչացնելն ու ավերելն ապագայի մարտիկների միակ միաչափ ունակությունը չէ: Նրանք պետք է հավասարապես արդյունավետորեն ոչ միայն իրականացնեն բնաջնջումներ կամ ավերածություններ, այլև ջանան ապահովել գոյատևում, զարգացում ու կատարելագործում ինչպես իրենց, այնպես էլ ուրիշների համար՝ պատասխանատու կերպով իրենց և ուրիշներին պաշտպանելով ցեղասպանությունից, էթնիկ զտումներից և պատերազմական այլ հանցագործություններից:[96]

Այսպիսով, որո՞նք են մեր խնդիրները այս ոլորտում: Մենք նույնիսկ կարող ենք պաթետիկորեն կրկնել Չերնիշևսկու հարցը՝ Ի՞նչ անել: Մեր թեմայի վերաբերյալ գրականության բազում առաջարկներից ընտրենք միայն մի քանիսը:

Օրինակ' ՆԱՏՕ-ն փնտրում է գործիքներ և միջոցներ ՆԱՏՕ-ի ու նրա դաշնակիցների ճանաչողական տիրույթի վրա հարձակումները բացահայտելու, գնահատելու և պաշտպանելու համար: Նպատակ ունի.

[96] Հմմտ. J. Świniarski, *Wpływ zmieniającej się przestrzeni społeczno-kulturowej na aksjologię sił zbrojnych*, „Colloquium Wydziału Nauk Humanistycznych i Społecznych", Wojskowa Akademia Techniczna w Warszawie, 1/2014, s. 24-25

- բացահայտել, թե երբ են ՆԱՏՕ-ի ուժերը և / կամ նրանց դաշնակիցները ճանաչողական հարձակման տակ,

- ստուգել հարձակման մասշտաբն ու բնույթը,

- սահմանել հարձակման հավանական հաջողության հնարավորությունը և / կամ մակարդակը,

- կիրառել ճանաչողական հարձակմանը հակազդելու մեղմացման մեթոդները, գործիքները և միջոցները,

- աջակցել որոշումներ կայացնող բջիջներին:[97]


[98]

Դա ամբողջական և նույնիսկ գլոբալ մոտեցում է: Իսկ Հայաստանը կարո՞ղ է իրեն նման բան թույլ տալ: Մասնակիորեն՝ այո: Ստորև ներկայացնում ենք այդ ուղղությամբ մի քանի քայլեր, որոնք հնարավոր է իրականացնել (առնվազն մասամբ) մակրո մասշտաբով: Ավելին՝ այս մարտահրավերների և սպառնալիքների հետևանքները մեղմելու և ճանաչողական ոլորտում պետության ճկունությունը բարձրացնելու համար արժե հաշվի առնել հետևյալ գործողությունները.

- իրավիճակային (օպերատիվ)

[97] Հմմտ. *Fall 2021 NATO Innovation Challenge …*
[98] Image by <a href="https://www.freepik.com/free-photo/side-view-male-hacker-with-laptop-protected-by-metal-chain_8725467.htm#page=2&query=Niebezpieczny%20Anonimowy%20Haker%20W%20Masce%20Z%20Kapturem%20I%20Za%20Pomoc%C4%85%20Komputera%20I%20Smartfona%20Na%20Czarno%20chain%20computer&position=10&from_view=search&track=ais">Freepik</a>

„Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

իրազեկում զարգացնելու, ազգային անվտանգության համար ռիսկերն ու դրանց հետևանքները ճանաչելու, ինչպես նաև կարծիքներից, ճշմարտությունը կեղծիքից, ապացույցները ենթադրություններից տարբերելու հնարավորություն ունենալու համար կատարել մշտատև վերլուծական ուսումնասիրություններ,

- փոխել պետական անվտանգությանը սպառնացող վտանգների ընկալումը, քանի որ բազմաթիվ սպառնալիքներ կառաջանան բաց զինված հակամարտության (գորշ գոտու) շեմից անդի՝ հակառակորդի անտեսանելի գործողություններից, և կապված կլինեն հասարակության վրա նրա ազդեցության հետ,

- ջանքեր գործադրել՝ հասկանալու հակառակորդի գործունեության ցանկալի վերջնական վիճակը «գորշ գոտում»՝ հակամարտությունների անորոշության համատեքստում,

- հակառակորդի կոգնիտիվ պատերազմին խոչընդոտել՝ թիրախային լսարանից ակնկալվող արձագանքին հասնելը կանխելու համար,

- խուսափել պոտենցիալ հակառակորդի համար ընդունված ռիսկերի սահմանները (կարմիր գծեր) նախորոշելու սխալից,

- կիրառել նորագույն տեխնոլոգիաներ՝ ճանաչողական գործողություններում առավելություններ ձեռք բերելու համար, ներառյալ՝ առցանց հարձակումներին հակազդելու կարողություն ձեռք բերելը:[99]

Ոչ նվազ կարևորություն ունի Դեյվիդ Պապալարդոյի մոտեցումը, որը նշում է հետևյալը.

- կրթությունն ու ուսուցումը կարևոր նշանակություն ունեն մեզ անհատական և կոլեկտիվ «ճանաչողական սխալներից» պաշտպանելու համար՝ «պահանջելով», որ ինքներս մեզ մշտապես «հարցաքննենք»՝ աջակցելով կոնֆլիկտայնության հանդեպ հասարակական ու հոգեբանական հակազդեցության մոտեցմանը,

[99] Հմմտ. R. Reczkowski, A. Lis, *Cognitive Warfare: what …* p. 57

- ավելին, անհրաժեշտ է ազատվել մեզ միայն տեխնոլոգիայի շնորհիվ հնարավոր դարձած մարտադաշտի կատարյալ ըմբռնման կամ ընկալման (ու դրա հետևանքով հաղթանակի հասնելու) ուտոպիական իդեա-երազանքից: Տեխնոլոգիական միջոցները միշտ չէ, որ ցրում են «պատերազմի մշուշը»: Ընդհակառակը, տվյալների ավելի մեծ մատչելիությունը (եթե մեզ չհաջողվի տիրապետել տեղեկատվության հոսքին) կարող է ստեղծել առավել «խիտ մառախուղ» և բարդացնել ամեն ինչ՝ ի վնաս մեր ռազմական գործողությունների արդյունավետության.

- կարևոր խնդիր է մշտական տեղեկատվական ագրեսիայի դեմ պաշտպանության և հակառակորդի կողմից մեր ճանաչողական կողմնակալության (օպորտունիստական) էության շահագործումը: Վերջինս կարող է կաշկանդել կամ խեղաթյուրել որոշումներ կայացնելու մեր ունակությունները՝ անգամ կաթվածահար անելով դրանք,



[100]

[100] Image by <a href="https://www.freepik.com/free-photo/newspaper-background-concept_29015976.htm#query=fake%20news&from_query=desinformation&position=12&from_view=search&track=sph">Freepik</a>

- ճանաչողական պատերազմը պահանջում է գլոբալ, բազմադոմենային և ամբողջական՝ կառավարական մոտեցում, որպեսզի խթանի կիբեր և տեղեկատվական տիրույթների միջև կատարյալ ինտեգրումը՝ պաշտպանելով մեր ամենակարևոր արժեքներից մեկը՝ տեղեկատվությունը,

- հարձակողական պատերազմը ճանաչողական տիրույթում կազմում է ջանքերի հերթական՝ էթիկական հարթակ, որն անգամ կարող է լինել մեր բնույթին դեմ: Դրանցից չպետք է խուսափել, անգամ, եթե մեղմ ասած, այնքան էլ բարոյական չեն,

- ռազմավարական մակարդակում անհրաժեշտ է ներգրավել ողջ կառավարությանը՝ որպեսզի ապահովվի որոշումների կայացումը և կոլեկտիվ «ճանաչողական անվտանգությունը»: Սա պայմանավորում է ավելի լավ կրթված և պատրաստված բնակչության ծայրահեղ անհրաժեշտություն,

- ռազմական մակարդակում, «պատերազմից առաջ պատերազմում հաղթելու համար», մենք պետք է պաշտպանվենք ճանաչողական ագրեսիայից և պատրաստ լինենք հակահարված տալու՝ հակազդելով հակառակորդի մտածական գործընթացների վրա:[101]

Իհարկե, վերոհիշյալները հնարավոր, բայց առավելապես, թեպետ ոչ միշտ, պետական մակարդակով կազմակերպելու գործողություններ են: Սակայն Կազումի Նագանուման առաջարկում է կոգնիտիվ պատերազմների դեմ հակազդեցության առավել կոնկրետ՝ անգամ այսպես կոչված «շարքային» անհատին հասանելի միջոցներ.

[101] Հմմտ. D. Pappalardo, *„Win the War Before the War?”: A French Perspective on Cognitive Warfare, War on the Rocks, National security. For insiders. By insiders*, 01.08.2022, https://warontherocks.com/2022/08/win-the-war-before-the-war-a-french-perspective-on-cognitive-warfare (16.02.2023)

Պատմողականներ / տեղեկատվություն 5W1H տեսանկյունից /[102]

| Կիզակետ | Հարցեր, որոնք պետք է ստուգվեն կամ պարզաբանվեն | Հետևանքներ և մեկնաբանված բովանդակություն |
|---|---|---|
| ե՞րբ | ▪ Պատմության և տեղեկատվության ժամանակահատվածը (ներկա, անցյալ, ապառնի): | ▪ Պատմության ժամանակային ուղղորդվածությունը: |
| | ▪ Ժամանակը, երբ պատմությունը կամ տեղեկատվությունը հաղորդվել է (առավոտ, կեսօր, գիշեր և այլն): | ▪ Գործող անձանց ակտիվության ժամանակը և ժամանակահատվածը |
| որտե՞ղ | ▪ Վայրեր, որոնք հայտնվում են պատմվածքում կամ տեղեկատվությունում: | ▪ Ակնարկ կամ պատմվածքի հուշում թեմայի վերաբերյալ: |
| | ▪ Վայրեր, որտեղ հաղորդվել է պատմությունը կամ տեղեկատվությունը: | ▪ Վայր, որը գտնվում է գործող անձանց հետաքրքրության շրջանակում: |
| ո՞վ | ▪ Հերոսներ, որոնք հայտնվում են պատմվածքում կամ տեղեկատվությունում: | ▪ Պատմության կամ տեղեկատվության մեջ հայտնված հերոսների անհատականությունը և վարքագծի ձևերը: |
| | ▪ Հերոսներ (գործող անձինք), ովքեր հաղորդել են պատմվածքում կամ տեղեկատվությունում | ▪ Գործող անձի բնութագիրը և անցյալը: |
| ի՞նչ | ▪ Նպատակային օբեկտներ պատմվածքում կամ հաղորդագրությունում: | ▪ Պատմության կամ տեղեկատվության մեջ կարևոր օբյեկտները: |

[102] 5W1H-ը անգլերեն **W**hen?, **W**here?, **W**ho?, **W**hat?, **W**hy?, **H**ow? (*ե՞րբ, որտե՞ղ, ո՞վ, ի՞նչ, ինչու՞, ինչպե՞ս*) բառերի հապավումն է ' 5 x **W** 1 x **H**:

**„Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում” նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:**

| | | |
|---|---|---|
| | ▪ Պատմությունը փոխանցող կամ հաղորդող հերոսների թիրախային օբյեկտները: | ▪ Օբյեկտներ, որոնք ընկալվում են որպես կարևոր՝ պատմվածքը կամ տեղեկատվությունը հաղորդողների կողմից: |
| ինչու՞ | ▪ Պատմության կամ տեղեկատվության մեջ հայտնված հերոսների (ներկայության) գործողությունների պատճառները: | ▪ Պատճառային կապը պատմվածքում կամ տեղեկատվությունում: |
| | ▪ Պատմությունը կամ տեղեկատվությունը փոխանցող կամ հաղորդող հերոսների (գործող անձանց) նախապատմությունը | ▪ Պատմությունը կամ տեղեկատվությունը փոխանցող անձանց նպատակներն ու մտադրությունները: |
| ինչպե՞ս | ▪ Պատմվածքում կամ տեղեկատվությունում հայտնված կերպարների նպատակներն ու գործողությունների դրսևորումները | ▪ Պատմվածքում կամ տեղեկատվությունում հայտնված կերպարների վարքագծի կանխատեսումներ |
| | ▪ Պատմվածքը կամ տեղեկատվությունը փոխանցող կամ հաղորդող կերպարների նպատակներն ու գործողությունների դրսևորումները: | ▪ Պատմվածքը կամ տեղեկատվությունը փոխանցող հերոսների վարքագծի կանխատեսումներ: |

Ըստ Kazumi Naganuma, *Warfare in the Cognitive Domain: Narrative, Emotionality, and Temporality*, The National Institute for Defense Studies, *Commentary*, no. 163, 30 March 2021, p. 4, http://www.nids.mod.go.jp/english/publication/commentary/pdf/commentary163e.pdf (16.02.2023)

Կոգնիտիվ պատերազմներում կազմակերպությունների և ( կամ անհատների բնութագրերի մեկնաբանման համար օգտագործվող պատմողականների ) տեղեկատվությունների վերլուծական բանալիներն ըստ Նագանումայի հետևյալն են.

| Կիզակետ | Հարցեր, որոնք պետք է ստուգվեն և պարզաբանվեն | Հետևանքներ և մեկնաբանված բովանդակություն |
|---|---|---|
| Կանխակալ ենթադրություն-ներ | ▪ Ի՞նչ տեղի կունենար, եթե պատմությունը կամ տեղեկատվությունը փոխարինվեր մի այլով: | ▪ Տեղեկատվություն փոխանցողի և հաղորդողի մտադրությունները կամ տեղեկատվության փոխանցման նպատակները: |
| Ոչ միտումնավոր պատճառներ | ▪ Ինչո՞ւ պատմվածում կամ տեղեկատվությունում դա չի շոշափվել: | ▪ Այն տեղեկատվության առկայության հնարավորությունը, որը տեղեկատվություն հաղորդողը ցանկանում է թաքցնել: |
| Տեղեկատվության աղբյուրներ | ▪ Արդյո՞ք տեղեկատվության աղբյուրները հստակ բացահայտված են: | ▪ Տեղեկատվության աղբյուրի գաղտնիություն՝ որևէ կազմակերպության ներգրավում կամ դավադրության տեսություն |
| | ▪ Որո՞նք են նշված տեղեկատվական աղբյուրների | ▪ Տեղեկատվության աղբյուրի սուբյեկտի կողմից ազդեցության |

| | | |
|---|---|---|
| | առանձնահատկություն-ները: | ներթափանցում և տարածում: |
| Նմանություններ | ▪ Կարո՞ղ են արդյոք նույնականացվել նմանատիպ պնդումները: | ▪ Նմանատիպ պնդումների առկայություն՝ այլ հայցվորների և պահանջատերերի կողմից ազդեցության իրականացում: |
| | ▪ Որո՞նք են նմանատիպ պնդումներ անող գործող այլ անձանց առանձնահատկություննե րը: | ▪ Այլ անձնական կամ կազմակերպչական մտադրությունները և նպատակները: |
| | ▪ Կա՞ն ուժեղ կամ թույլ նմանություններ: | ▪ Խիստ նմանություն ՝ բոտեր կան գործող այլ անձիք կամ մասնակիցներ: |
| Կողմնակալ լինելու հակում | ▪ Կոնկրետ հարցերի հանդեպ կա՞ որևէ կողմնակալություն: | ▪ Կազմակերպչական նախադրյալներ, անձնական, գաղափարական կամ մտածական առանձնահատկություններ, նախասիրություններ, համառություն և հաստատակամություն: |
| | ▪ Եթե այո, ապա ի՞նչ տեսակի հարցեր են առաջանում: | |
| Համաժամանա-կացում | ▪ Կան արդյո՞ք տեղեկատվությունը միաժամանակ հաղորդող մի շարք անձինք: | ▪ Ազդեցություն այլ անձանց վրա, ինտերնետային |

| | | |
|---|---|---|
| | | բազմաթիվ պրոֆիլների օգտագործում: |
| | ▪ Ո՞րն է պնդումների կամ հավաստումների ու տեղեկագրության ժամանակաշրջանի մոտավոր տևողությունը: | ▪ Ժամանակագրության ու կազմակերպչական նախադրյալներ կամ բոտեր: |
| Զգացմունքային | ▪ Զգացմունքների հետ կապված բառեր կա՞ն: | Կազմակերպչական նախադրյալներ, անհատական հատկանիշներ: |
| | ▪ Կան արդյո՞ք բազմիցս օգտագործվող զգացմունքային բառեր: | |
| Առանձնահատկութ-յուններ | ▪ Արդյո՞ք օգտագործվում է բնական լեզու: | ▪ Բոտ կամ ոչ մայրենի խոսնակ: |
| | ▪ Արդյո՞ք օգտագործվում է լեզու, որը սովորաբար չի օգտագործվում:: | ▪ Կազմակերպություն, զբաղմունք, ծննդավայր կամ գաղափարական նախադրյալ / ֆոն: |

Ըստ Kazumi Naganuma, *Warfare in the Cognitive Domain: Narrative, Emotionality, and Temporality*, The National Institute for Defense Studies, *Commentary*, no. 163, 30 March 2021, p. 6, http://www.nids.mod.go.jp/english/publication/commentary/pdf/commentary163e.pdf (16.02.2023)


[103]

Կ. Նագանուման սակայն ավելի է մանրամասնում իր դիրատկած գործողությունները՝ առաջարկելով հակառակորդի պատմությունների կամ տեղեկատվությունների դեմ հակաքայլերի այս օրինակները.

[103] <a href="https://www.freepik.com/free-photo/beautiful-woman-looks-through-jalousie_7064802.htm#query=cognitive%20defence&position=34&from_view=search&track=ais">Image by Racool_studio</a> on Freepik




Ըստ Kazumi Naganuma, *Warfare in the Cognitive Domain: Narrative, Emotionality, and Temporality*, The National Institute for Defense Studies, *Commentary*, no. 163, 30 March 2021, p. 8, http://www.nids.mod.go.jp/english/publication/commentary/pdf/commentary163e.pdf (16.02.2023)

Իսկ գուցե հակահարձակո՞ւմ ... Այս առումով Կազումի Նագանուման, Կազուհիսա Կավակամին, Հիկարու Սակամոտոն, Տակայուկի Սակագամին, Կեիգո Միյասական, Միտսուհիրո Ոկադան, Տակայուկի Տատսումին առաջարկում են յոթ քարոզչական գործողություններ հակառակորդի հարթակներում, որոնք հիմնված են ԱՄՆ-ում կատարված հետազոտությունների վրա.

| | Դասակարգում | Մեթոդ | Նպատակ |
|---|---|---|---|
| 1 | Անվանական կոչում | Վատ տպավորություն ստեղծելու համար դիմացինին պիտակավորել | Տեղեկատվություն ստացողին դրդել, որ չաջակցի մյուս կողմին |
| 2 | Սքանչելի ընդհանրութ-յուններ | Մյուս կողմին և նրա գործողությունները համամարդկային արժեքների հետ կապել | Տեղեկատվության ստացողին դրդել աջակցել մյուս կողմին |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Փոխանցում | Գոյություն ունեցող իշխանության կողմը բռնել | Տեղեկատվություն ստացողին կամ նրա գործողություններն արդարացնել ու օժտել իշխանության լիազորություններով |
| 4 | Բնութագիր | Օգտագործել արժանահավատ ճանաչված անձի վկայությունները | Բարձրացնել տեղեկատվության հաղորդիչի համոզիչությունը |
| 5 | Հասարակ ժողովուրդ | Ընդծել, որ բոլորը նույն մակարդակին են | Ապահովել հոգեհարազատություն տեղեկատվություն ստացողի հանդեպ |
| 6 | Քարտերի կուտակում | Ընդգծել միայն այն տեղեկատվությունը, որն աջակցում է (համահունչ է) մեր պատմությանը՝ թաքցնելով այն տեղեկատվությունը, որը դրան չի համապատասխանում ու չի նպաստում | Ստեղծել հասարակական կարծիքի այնպիսի միջավայր, որը ձեռնտու է տեղեկատվություն ստացողին |
| 7 | Բանդվագոն[104] | Տեղեկատվությունն այնպես ներկայացնել ու հրապարակել, որ կարծես դա համաշխարհային միտում է՝ ուղղություն | Տեղեկատվության ստացողին դրդել աջակցել մյուս կողմին |

Ըստ Kazumi Naganuma, *Warfare in the Cognitive Domain: Narrative, Emotionality, and Temporality*, The National Institute for Defense Studies, *Commentary*, no. 163, 30 March 2021, p. 10, http://www.nids.mod.go.jp/english/publication/commentary/pdf/commentary163e.pdf (17.02.2023)

[104] *Bandwagon* տերմինն օգտագործվում է որևէ գործողության կամ այլ բանի պարագայում, որը ներկայումս նորաձև է կամ հայտնի ու աճող համակիր ուշադրություն է գրավում:

Անհատական ջանքերն իհարկե կարող են լինել արդյունավետ, սակայն հատկապես օգտակար են այն տեխնոլոգիական լուծումները, որոնք կարող են դառնալ ճանաչողական պատերազմի մոնիտորինգի և նախազգուշացման համակարգի էական մասնիկներ: Նման համակարգը կարող է օգնել բացահայտելու ճանաչողական արշավները, երբ նրանք սկսում են, և հետևել դրանց առաջընթացին: Այն կարող է ներառել կառավարման *հարթակ*, որը կինտեգրի սոցիալական ու հեռարձակվող լրատվամիջոցների, սոցիալական հաղորդագրությունների և սոցիալական ցանցերի տվյալները:[105]


[106]

Ճանաչելով, օրինակ, աշխարհագրական (վիրտուալ) վայրերը, որտեղից գալիս են սոցիալական մեդիայի գրառումները, նորությունները և մեկնաբանությունները, ինչպես նաև քննարկման թեմաները, հասարակական տրամադրությունները, լեզվական հատկանիշները, նյութի հրապարակման արագությունն ու այլ գործոններ, նման հարթակը կարող է բացահայտել որոշակի անհատական կապեր և կրկնվող օրինաչափություններ: Կարելի է դիտարկել սոցիալ մեդիաների փոխհարաբերություն-ները (օրինակ՝ վերբեռնումներ, մեկնաբանություններ, փոխազդեցություններ և այլն) ու դրանց ժամանակային առանցքները: Հարթակի ինքնուսուցման և

[105] Հմմտ. K. Cao, et al., *Countering cognitive warfare …*; D. Calvo, R. Cheng, M. Helou, N. Kratz, C. Liddy, J. McDonnell, T. Shin, J. Taak, J. Crawford, M. Furbish, M. A. Haj, N. Luzum, O. Webb, *Przeciwdziałanie dezinformacji - wzmocnienie …*
[106] <a href="https://www.freepik.com/free-photo/worried-asian-woman-being-caught-taped-wall-holds-mobile-phone-downloads-amazing-application-feels-free-needs-make-call-has-nervous-expression_18891245.htm#page=2&query=fake%20news&position=23&from_view=search&track=ais">Image by wayhomestudio</a> on Freepik

„Դադարեցնե՛լ մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:

օրինաչափությունների ճանաչման ալգորիթմների օգտագործումը կարող է օգնել արագ բացահայտել ու դասակարգել առաջացող կոգնիտիվ արշավները՝ առանց մարդկային միջամտության:[107]

Մենք ապրում ենք էժան թվային գործիքների և լրատվամիջոցների աշխարհում՝ տեղեկատվության հուժկու՝ արմատապես ավելացած հոսքի հասանելիությամբ, մասշտաբով և ազդեցությամբ: Խնդիրն այն է, որ այդ ընդհանուր գործիքները հասանելի են ոչ միայն պետական գործիչներին, այլև անհատներին՝ բոլորին: Եվ հենց հասարակական լրատվամիջոցներն ու համացանցը հնարավորություն են տվել դրդել ապատեղեկատվական հեղափոխություն, որն ազդում է բառացիորեն բոլորիս վրա:

Կեղծ լուրերն ու մեզ բորբոքող պատմությունները եզակի դեպքերում են դարձել պարզապես վերնագրեր: Ավելի նենգ վտանգ է նրանց այն կարողությունը, որն ի վիճակի է ի չիք դարձնել մեր հավատը ժողովրդավարական կառավարման ինստիտուտների, հանրային տեղեկատվության ու սոցիալական դիսկուրսը ապահովող ռեսուրսների նկատմամբ: Վերջին տարիներին նկատվել է քաղաքական դիրքորոշումների աճող բևեռացում, կառավարական ինստիտուտների նկատմամբ վստահության ռեկորդային ցածր մակարդակ և քաղաքացիական անկարգություններ ու բռնություններ, որոնք մասամբ սնվել են կեղծ լուրերով: Իսկ քանի - քանի անգամ է մեր ուշադրությունը կենտրոնացել կեղծ փաստերի վրա ...[108]

Հիշեցնենք, որ արհեստական ինտելեկտի վրա հիմնված տրամադրությունների վերլուծությունը ներկայացնում է ապատեղեկատվությունը նվազեցնելու բոլորովին այլ մոտեցում՝ սովորեցնելով համակարգիչներին ճանաչել նորություններն ու

[107] Հմմտ. K. Cao et al, *Countering cognitive …*; D. Calvo, R. Cheng, M. Helou, N. Kratz, C. Liddy, J. McDonnell, T. Shin, J. Taak, J. Crawford, M. Furbish, M. A. Haj, N. Luzum, O. Webb, *Przeciwdziałanie dezinformacji - wzmocnienie …*

[108] Հմմտ. K. Cao et al, *Countering cognitive …*; D. Calvo et al, *Przeciwdziałanie dezinformacji …*; *The Danger of Fake News in Inflaming or Suppressing Social Conflict*, https://www.cits.ucsb.edu/fake-news/danger-social (17.02.2023); *How is Fake News Spread? Bots, People like You, Trolls, and Microtargeting*, https://cits.ucsb.edu/fake-news/spread#spread-microtargeting (17.02.2023); *The role of fake news in fueling hate speech and extremism online; Promoting adequate measures for tackling the phenomenon*, June 2021, European Foundation for South Asian Studies, Amsterdam, https://www.efsas.org/publications/study-papers/the-role-of-fake-news-in-fueling-hate-speech-and-extremism-online (17.02.2023)

գրառումները, որոնք պարունակում են զարմանքի, զզվանքի և այլ՝ զգացմունքային կանխատեսող տարրեր: Դրանք ավելի հաճախ կապված են կեղծ տեղեկատվության հետ և բորբոքում են սոցցանցերի օգտատերերի զգացմունքները[109]:

[109] Հմմտ. K. Cao et al, *Countering cognitive …*; D. Calvo et al, *Przeciwdziałanie dezinformacji …*; F. Olan, U. Jayawickrama, E. O. Arakpogun, J. Suklan, S. Liu, *Fake news on Social Media: the Impact on Society*, “Information Systems Frontiers”, 05.01.2022, https://link.springer.com/article/10.1007/s10796-022-10242-z (17.02.2023)

# Բացթողման մե՞ղք

Հիմա մի հայացք գցենք մեր բացթողումներին:

2023 թ. սեպտեմբերի 13-14-ից հետո Բաքվում սկսվեց ադրբեջանական ագրեսիայի դեմ հանդես եկող ադրբեջանցիներին ամոթանք տալու մի աննախադեպ հանրային արշավ: Բացի ամոթանքի խոսքերից, տարածվում էին նրանց անուններն ու լուսանկարները՝ բոլորը դրոշմված #xainitaniyaq հեշթեգով՝ «ճանաչենք դավաճանին» գրությամբ: Ակտիվիստների, լրագրողների և քաղաքական գործիչների նկարներն ու տեսանյութերը տարածվել էին Facebook-ում և Twitter-ում, այդ թվում նաև՝ իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության (YAP) երիտասարդական թևի և կուսակցության անդամների կողմից[110]:



[111]

[110] Հմմտ. I. Aghayev, *Voices of dissent: Azerbaijan reacts to war*, 22.09.2022, https://oc-media.org/features/voices-of-dissent-azerbaijan-reacts-to-war (17.02.2023)
[111] Հմմտ. Ismi Aghayev, *Voices of dissent: Azerbaijan …*

Սա մի հրաշալի առիթ էր, որ Հայաստանը պետք է օգտագործեր միջազգային հարթակներում՝ տարբեր լեզուներով գովելով հիշյալ անձանց նրանց նկարների վրա օգտագործելով այլ հեշթեգ (#honestAzeris և այլն)՝ «ազնիվ ադրբեջանցիներ»: Կարող էր արդյո՞ք առանձին թերթ, հեռուստատեսություն, ինտերնետ պորտալ և այլն նույնն անել: Իհարկե, ու սա առիթ էր, որպեսզի «խառնակություն» ստեղծվեր Ադրբեջանի ինտերնետ հարթակներում:

Սա կհանգեցներ ադրբեջանցիների ագրեսիվ հարձակումներին հայերի դեմ, որը կարելի էր առավել խորացնել (կարելի էր օգտագործել մի շարք այլ «կարգախոսներ» ևս. *«Ազնիվ ադրբեջանցիներն իրենց երկրում կյանք չունեն ու հետապնդվում են»*, *«Ինչպե՞ս Բաքուն կարող է խոսել խաղաղության մասին, երբ կոտրում է իր ազնիվ քաղաքացիների ողնաշարը»* և այլն): Առավել ևս, որ ադրբեջանական հետապնդումների վերաբերյալ այդ հոդվածի հեղինակն ադրբեջանցի էր՝ Իսմի Աղաև: Այսպիսի դեպքերը շատ են, սակայն ոչինչ չարվեց, և դա ոչ թե մեկ կամ երկու լրագրողների «անուշադրության» հետևանքն է, այլ՝ ճանաչողական պատերազմի վերաբերյալ համակարգային (պետական) քաղաքականության բացակայության արդյունք:

«Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայությունը գրում է. «Կառավարամետ պատգամավոր Ֆազիլ Մուստաֆան, որը հանդիսանում է Ադրբեջանի մեծավ մասամբ ռետինե-դրոշմակնիք[112] խորհրդարանում մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ, ֆեյսբուքյան իր էջում տարածել է «իմացիր, թե ովքեր են դավաճանները» տեսանյութը»:[113]

[112] Ռետինե կնիք (rubber stamp) արտահայտությունը քաղաքական փոխաբերություն է: Նշանակում է, որ զգալի *de jure* իշխանություն ունեցող, բայց *de facto* քիչ հզորություն ունեցող անձ կամ հաստատություն է, հազվադեպ է կամ երբեք չի հակառակվում ավելի հզորին: Տվյալ պարագայում հոդվածագիրը նկատի ունի ադրբեջանի տիկնիկային պարլամենտը:
[113] RFE/RL's Azerbaijani Service, *'Know Who The Traitors Are': Azerbaijanis Speaking Out Against The Karabakh War Are Being Targeted On Social Media*, 23.09.2022, https://www.rferl.org/a/azerbaijan-traitors-nagorno-karabakh-social-media-campaign/32047849.html (17.02.2023)

Ֆեյսբուքյան այդ տեղեկատվության մեկնաբանություններում հայկական բոտերի կողմից ոչ մի արձագանք չկար ու դեռ չկա.



[114]

Համանման «բացթողման մեղքն է» ներքնիշյալ տեղեկատվությունը: Թուրքիայում ուսանող ադրբեջանցին պնդում է, որ Թուրքիա-Սիրիա երկրաշարժի հետևանքով մահացած և չորս ուսանողները երկրաշարժի ժամանակ Ադրբեջանում իրենց տներում կլինեին ու չէին մահանա, եթե երկրի ցամաքային սահմանները «COVID-19»-ի պատճառով շարունակ փակ չլինեին:[115] Նույն Իսմի Աղաևի այս տեղեկատվությունը միջազգային մեդիահարթակներում կարելի էր օգտագործել՝ նշելով, օրինակ, որ «ադրբեջանցին Ադրբեջանի համար նշանակություն չունի՝ արժեք չէ» և այլն:

Հաջորդ դրվագն այնքան խոսուն է, որ մեկնաբանության կարիք պարզապես չկա:

[114] https://www.facebook.com/nahid.canbaxishli/videos/776908106855840
[115] I. Aghayev, *Azerbaijanis killed in Turkey quake 'could have survived if border was open'*, 17.02.2023, https://oc-media.org/azerbaijanis-killed-in-turkey-quake-could-have-survived-if-border-was-open (17.02.2023)

„Դադարեցնել մեդիատեռորը Հայաստանում" նախաձեռնությունը ֆինանսավորվում է լեհ-ամերիկյան Ազատություն Հիմնադրամի ՌԻՏԱ Ծրագրի կողմից:




Ոմն Սենան Ռահիմովը այսպիսի մեկնաբանություններ է գրում զանազան հայկական պրոֆիլներում: Անպատիժ, սանձարձակ copy paste է անում, բառացիորեն նույն տեքստը՝ Հայաստանի հորինված պատմությունը, որը պտտվում է հատկապես ադրբեջանական ինտերնետով: Ըստ ամենայնի, դա բոտ է (ու միայն այդ մի բոտը չէ), բայց հայկական բոտերը «պատմական» այդ «գյուտը» չեն ջնջում: Հակադարձ տեղեկատվություններ չեն տեղադրում ի հակառակ նրա բարբաջանքի.



[116]

Ավելին՝ այսպես կոչված Ռահիմովը, ինչպես տեսնում ենք ներքևի սկանում, Facebook-ի ... հայկական խմբի անդամ է (ու կարծես դա իր միակ խումբն է): Եվ ոչ ոք սա չի՞ տեսնում:




[116] Վերոհիշյալ պատմությունը կոզնիտիվ պատերազմի փայլուն օրինակ է: Ինտերնետում տարբեր վարիացիաներով կրկնվում է առնվազն 25 անգամ: Օրինակ'

1. https://www.facebook.com/photo/?fbid=1301707697043789&set=gm.441444154801727&idorvanity=135909682021844
2. https://www.facebook.com/1890544217906379/photos/a.1914177318876402/2503352853292176/
3. https://kafkaznews.com/amp/ru/алиев-и-истина-об-азербайджанских-ист/
4. https://www.baku365.com/topic/12769-tema-o-pobede-29/page/7/
5. https://www.virtualkarabakh.az/ru/post-item/3/27/istoriya-irevana.html
6. https://www.facebook.com/PsychologistDoctorAliyevskaya/photos/a.2108693362495167/3588348091196346/
7. https://karabakh.center/d/page18192904.html
8. https://www.kavkaz-uzel.eu/forum/topics/1621
9. https://vk.com/wall-143628909_43479
10. https://artsakh.news/am/news/241560?fbclid=IwAR2qdSU3G9vGaE6ByBMkYeIFA1Z2k6IgFm7IKvqFazZ8PYkNngMPo3PRHQU և այլն:

Հակազդելով երկրաշարժից հետո Թուրքիային ցույց տված հայկական օգնության միջազգային դրական արձագանքներին՝ Ռահիմովն ադրբեջանական Facebook-ում այսպիսի «տեղեկատվություն» է տարածում:



[117]

Հայկական լրատվամիջոցներն ու բոտերը (ներառյալ Facebook-ը) լռում են՝ ոչ մի հակաքայլ չձեռնարկելով:

Մեկ այլ «հետաքրքրաշարժ» իրողություն: 2008 թվականի մայիսին Դուբլինում մի շարք երկրների կողմից հավանության է արժանացել Կասետային զինամթերքի կոնվենցիան (Convention on Cluster Munitions), որն արգելում է կասետային ռումբերի կիրառումը: Այնուամենայնիվ Ադրբեջանն այն կիրառեց: Ռէսանողների հետ մի

[117] Facebook: *https://www.facebook.com/photo.php?fbid=5849700271751701&set=p.5849700271751701&type=3*

բանավեճի ընթացքում Օլշտինում Լեհաստանի Վարմինսկո-Մազուրսկի Համալսարանի գիտաշխատող Ռադոսլավ Ֆորդոնսկին ... լիովին արդարացրեց այդ նողկալի երևույթը՝ թե կասետային ռումբերն ապահով են, բավական է թաքնվել որևէ նկուղում ... ու վերջ՝ խնդիր չկա:




Ըստ Ռադոսլավ Ֆորդոնսկու կասետային ռումբը մահացու զենք չէ:

Վարշավայում Հայաստանի Դեսպանությունը լռեց: ՈՒ այն էլ 44-օրյա պատերազմի օրերին: Ի հակադրություն հայկական պահվածքի, երբ Կատովիցեում Շլոնսկի Համալսարանի դասախոս Հրայր Մաղաքյանը հարցազրույց տվեց լեհական ռեգիոնալ մամուլի ներկայացուցչին, այն էլ պատերազմից առաջ, Վարշավայում, Ադրբեջանի Դեսպանությունն անմիջապես կապվեց (ռեգիոնալ) թերթի խմբագրության հետ՝ առաջարկելով հանդիպել Վարշավայում, որ իրենք ներկայացնեն իրենց տեսակետը: Մինչ օրս խմբագրությունը նրանցից զանազան հրավերներ է ստանում:

Ինտերնետը հեղեղված է կոգնիտիվ պատերազմի ադրբեջանական արտադրանքներով, որոնք հաջողությամբ, այսինքն հայկական «օրհնությամբ», անպատիժ գործում են: Օրինակ.

В 12 часов дня 30 мая в Тифлисе было опубликовано заявление Армянского национального (центрального) совета: «В связи с новым положением, возникшим в результате ликвидации Закавказской политической общности и провозглашения независимости Грузии и Азербайджана, Армянский национальный совет объявляет себя высшей и единственной властью армянских областей. Оставив по некоторым весомым причинам вопрос формирования Армянского национального правительства в ближайшие дни, Национальный совет временно принимает все функции правительства по политическому и административному управлению армянских областей.».[ См. НАА ф. 222, оп. 1, д. 141, л. 239]. И что означает «армянские области»? Таких областей на Южном Кавказе и не было! Армянская сторона не хотела объявлять о своем государстве в рамках предоставленных Азербайджаном территорий. Были замыслы по военному расширению территории за счет этнических чисток местного азербайджанского населения.

Поэтому несуществующее армянское государство претендовало на территорию Эриванской губернии, большую часть Карсской области, а также на часть территории Елизаветпольской губернии (Зангезурский уезд, горные районы Джеванширского, Елизаветпольского,Казахского, Карягинского, Шушинского уездов) и Тифлисской губернии (Ахалкалакский уезд, южная и западная части Борчалинского уезда) бывшей Российской империи (*Andrew Andersen and Georg Egge*. Armenia in the Aftermath of Mudros: Conflicting claims and Strife with the Neighbors). Вот такие были аппетиты армянских националистов и позднее были реализованы на крови и смерти десятки тысяч мирного азербайджанского населения. [118]

Համանման զարմանահրաշ «պատկառման փաստերի» պակաս բնավ չկա: Օրինակ.

аннексирует Ireванское ханство, и включает его территорию в состав свежесозданной указом царя Николая I от 21 марта 1828 года Армянской области. Иреван становится центром притяжения для армянской иммиграции. - 29 мая 1918 года - Парламент Азербайджана (Национальный Совет) под давлением стран-членов Антанты вынужденно уступает Армении азербайджанский город Иреван. - 1918-1920 гг. - правительство Армении осуществляет этническую чистку в Зангезуре, с целью вытеснения азербайджанцев с исконных земель. Военачальники Андраник и Нжде частично ликвидируют, частично изгоняют азербайджанское население из Зангезура. Зангезурская резня мирного населения зафиксирована европейскими журналистами. - 1 декабря 1920 года по решению Москвы большая часть Зангезурского уезда Азербайджана передается Армении. - 18 февраля 1929 года по решению Москвы территория Нахичевани площадью в 657 км2 – деревни Гурдбулаг, Хорядиз, Огбун, Алмалы, Итгыран, Султанбей, Гарсевян, Килид и др., а также деревня Нуведи Зангеланского района и 4400 гектаров лесов Газахского района передается Армении. - 1930 год. По решению Москвы Алдара, Лехваз, Астазур и другие населенные пункты Нахичевани передаются Армении, и на их базе создается район Мегри. - 1938 год. По решению Москвы часть Нахичеванских деревень Сядаряк и Кярки передаются Армении. - 1947-1953 годы. По решению руководства СССР 150,000 азербайджанцев из мест компактного проживания переселяются в Азербайджан. - 1969 год. По решению Москвы [119]

118 К. Рустамов, *К созданию Армянского государства на Южном Кавказе*, „Историко-аналитический портал”, 31.05.2021, https://erevangala500.com/news/531.html (17.02.2023)

119 *Трамп, Путин и Макрон сделали совместное заявление по Карабаху*, 02.10.2020, https://tengrinews.kz/commentator/93449/interval/all (17.02.2023)

կամ

